



ԳԼԵՆԴԵԼԻ
ՀԱՆՐԱՅԻՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԿՐԹԱՇՐՋԱՆ

223 North Jackson Street
Glendale, California 91206
(818) 241-3111

Տեղեկություններ
ծնողների և
աշակերտների
համար

Խնդրում ենք չմոռանալ
համապատասխան հարցաթերթերը
ստորագրել և վերադարձնել ձեր
գավակի դպրոցը՝ դրանք ստանալուց
30 օրերի ընթացքում:

2015 - 2016



GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 208 • Fax: 818-543-0716

OFFICE OF
EDUCATIONAL SERVICES

Հունիս 1, 2015

Հարգելի ծնող,

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հանձնառու է մնում բոլոր դասարանները օժտել բարձրորակ ուսուցիչներով: Կրթաշրջանն ամեն ջանք գործադրում է, որ բոլոր դասարանների ու առարկաների համար աշխատանքի հրավիրի ու պահպանի լավագույն ուսուցիչներին:

Որպես Title I ծրագրով հասկացումար ստացող կրթական հաստատություն, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանից ակնկալվում է երաշխավորել, որ մինչև 2005-2006 ուսումնական տարեշրջանի ավարտը, *«Ոչ մի երեխա չպետք է անտեսվի»* օրենքի համաձայն, **յուրաքանչյուր** դպրոցի **յուրաքանչյուր** ուսուցիչ ունենա մանկավարժական բարձր մասնագիտություն: Ավելացնենք նաև, որ Title I ծրագրով դպրոց համախոդ աշակերտների ծնողներն իրավունք ունեն դիմելով և տեղեկություն ստանալով իրենց երեխայի ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մասին: Ծնողները կարող են նաև տեղեկություն պահանջել դասարանում ուսումնական հարցերով ուսուցիչներին օժանդակող օգնականների մասնագիտության մասին:

Եթե ձեր երեխան համախոս է Title I ծրագրով դպրոց և դուք ցանկանում եք ձեր երեխայի ուսուցչի մասնագիտության մասին ավելի շատ տեղեկություններ ստանալ, խնդրում ենք կապվել ձեր դպրոցի տնօրենի հետ:

Շնորհակալություն ձեր երեխայի ուսման նկատմամբ ձեր ցուցաբերած հետաքրքրության և ուշադրության համար:

Հարգանքներով՝

Kelly King, Ed. D.

Դպրոցների գերատեսչի օգնական
Կրթական ծառայություններ

ԲՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐ	Էջ
FORM 1 - Ծնողի ծանուցման հաստատում	1
FORM 2 - Գանգատարկման ընթացակարգի տարեկան ծանուցման հաստատում	1
FORM 3 – Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից (EIS) օգտվող ծնողի կամ խնամակալի պատասխանատվության պայմանագիր	2
FORM 4 – 24-ժամյա դեղորայքի ընդունման ծրագիր	3
FORM 5 – Ուսուցմանը չմասնակցելու խնդրագիր	4
FORM 6 – Աշակերտի անունը, լուսանկարը, համացանցային վիդեո պատկերները և տարրեր հրատարակումները հրապարակային օգտագործման թույլտվություն	5
FORM 7 – Զինծառայությանը, գործատերերին, կուլջններին ու համալսարաններին 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների անձնական տեղեկությունները չդրսևորելու խնդրագիր	6
 ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
Ոչ խտրականության հայտարարություն	7
Առողջություն, ընտանեկան կյանք և սեռական հարաբերությունների ուսուցում	7
Կալիֆորնիային առողջապահության ծառայություններ	8
Գլխուղեղային ցնցումների մասին տեղեկաթերթիկ	12
Աշակերտի ապահովագրության ծրագիր	12
Բնակավայրի տարրերակներ	13
Ծնողական մասնակցություն	14
Անգլերեն լեզու սովորողների (ELL) տեղեկություններ	14
Դպրոց հանախումներ	15
Աշակերտի վարձագիծ	16
Դրական վարձագծի միջամտություն և աջակցություն (PBIS)	20
Խնամակալության օրենքի հայտարարություն	20
Ծխախոտի օգտագործման կանխարգելման ուսուցում (TUPE)	20
Այլընտրանքային դպրոցներ	21
Սեռական ոտնձգություն	21
Գանգատարկման ընթացակարգեր	23
Քաղաքավարության հետ կապված կանոնակարգեր	28
Դպրոցի հաշվետվության գեկուցագիր (SARC)	29
Աշակերտների լուսանկարում և տեսագրում	30
Կալիֆորնիայի ավագ դպրոցների ելֆի ֆննդություն (CAHSEE)	30
Առողջական տեսակետից ապահով դպրոցներ	30
Ինտերնետի մատչելիություն/Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ և ընդունելի օգտագործման կանոններ	31
Աշակերտների կողմից ինտերնետի անվտանգ օգտագործման մասին տեղեկություններ ծնողների համար	34
Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի ծնողական ծանուցագրի պայմաններ	35
Դպրոցին առնչվող արտակարգ իրավիճակի ու անվտանգության հարցեր	37

**FORM 1 – ԾՆՈՂԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2015-2016**

Form 1-ը պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈՂՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և վերադարձնեն աշակերտի դպրոցը:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը _____ ID համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

Խնդրում ենք այս հարցաթերթը ստորագրել և երեսուն (30) օրվա ընթացքում վերադարձնել ձեր երեխայի դպրոցը: Սրանով հաստատում եմ, որ Կալիֆոռնիայի օրենքի (EC § 48982) համաձայն, ձեզ տեղեկացրել ենք ծնողի և աշակերտի իրավունքների ու պատասխանատվությունների մասին: Ձեր ստորագրությամբ **չեմ ձշու՛մ** յուրահատուկ որևէ ծրագրի մասնակցելու ձեր համաձայնությունը, այլ պարզապես հաստատում եմ, որ ստացել եմ օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցագիրը:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը _____ Ամսաթիվը _____

**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ
ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ՝ ՍՏԱՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՀԱՄԱՐ**



**FORM 2 – ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2015-2016**

Form 2-ը պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈՂՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և վերադարձնեն աշակերտի դպրոցը:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը _____ ID համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

Խնդրում ենք այս հարցաթերթը ստորագրել և երեսուն (30) օրվա ընթացքում վերադարձնել ձեր երեխայի դպրոցը: Սրանով դուք հաստատում եմ, որ ստացել եմ Williams/Valenzuela Գանգատարկման ընթացակարգի տարեկան ծանուցումը: Ձեր ստորագրությամբ **չեմ ձշու՛մ** որևէ հատուկ ծրագրի մասնակցելու ձեր համաձայնությունը, այլ պարզապես հաստատում եմ, որ ստացել եմ օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցագիրը:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը _____ Ամսաթիվը _____

**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ
ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ՝ ՍՏԱՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՀԱՄԱՐ**

**FORM 3 – ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (EIS) ՕԳՏՎՈՂ ԾՆՈՂԻ ԿԱՄ
ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
2015-2016**

Հասկանում եմ և կհնազանդվեմ կրթաշրջանի օրենքներին ու կանոններին, ինչպես նաև դպրոցական որոշակի ուղեցույցներին՝ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից (EIS) օգտվելու համար: Հասկանում եմ նաև, որ այս կանոնների և ուղեցույցների խախտումը կարող է համարվել ոչ էթիկական և հիմք ծառայել ֆրեական հանցագործության: Հասկանում և համաձայն եմ նաև, որ կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների օգտագործման որպես նախապայման, կրթաշրջանն իրավունք ունի որևէ ժամանակ վերանայել այն նյութերը (software, peripheral devices և այլն), որոնք օգտագործում եմ կրթաշրջանի տեղեկատվական համակարգի սարքավորումներով և կամ խուզարկել կրթաշրջանի համացանցին կապված իմ անձնական համակարգիչը, որպեսզի որոշի, եթե պատշաճ է եղել այս սարքավորումների և համացանցի որոշակի օգտագործումը: Եթե որևէ խախտում կատարեմ, կգրկվեմ օգտագործման արտոնությունից և կենթարկվեմ կրթաշրջանի և/կամ դպրոցի կողմից կիրառվող կարգապահական պատժամիջոցների և/կամ իմ դեմ օրինական հայց կհարուցվի:

Որպես ներքինիշյալ աշակերտի ծնողը կամ խնամակալը, հասկանում եմ, որ գավալս ստացել է էլեկտրոնային տեղեկությունները պատշաճորեն օգտագործելու պայմանագրի պատենը, որով բացատրվում է կրթաշրջանի համակարգիչներն ու էլեկտրոնային ծառայություններն օգտագործելու կանոններն ու համապատասխան օգտագործումը: Հասկանում եմ, որ այս ծառայությունները ծրագրվել են ուսումնական նպատակներով և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը նախաձեռնել է նախագրուշական միջոցներ՝ վիճահարույց նյութերը վերացնելու համար:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը ID համարը Դպրոցը Դասարանը

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը Ամսաթիվը

ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ՝ ՍՏԱՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**FORM 4 – 24-ԺԱՄՅԱ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2015-2016**

Form 4-ը պետք է լրացնեն այն ծնողները, որոնց երեխաները դեղ են օգտագործում տանը և սույն հարցաթերթը լրացրած վերադարձնեն դպրոցի առողջապահության գրասենյակ:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը _____ ID համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

<u>Դեղի անունը</u>	<u>Դեղաբանակը</u>	<u>Դեղի օգտագործման պատճառը</u>	<u>Օգտագործման ժամերը</u>
1. _____	_____	_____	_____
2. _____	_____	_____	_____

Բժշկի անունը _____ Հասցեն _____ Հեռախոսահամարը _____

Սրանով հաստատում եմ, որ իմ համոզմամբ, վերոհիշյալ տեղեկությունները ցիշտ են: Ուստի թույլատրում եմ, որ դպրոցի բուժֆուլքը խորհրդակցի երեխայիս բժշկի հետ՝ վերոհիշյալ դեղորայքի օգտագործման հետևանքների, վնասակար ազդեցությունների ու ախտանշանների, դեղերը դադարեցնելու կամ դրանք չափից շատ օգտագործելու մասին:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը _____ Ամսաթիվը _____
 _____ Հասցեն _____ Հեռախոսահամարը _____

Եթե դեղը պետք է օգտագործվի դպրոցում, ձեր բժիշկը պետք է լրացնի ու ստորագրի Form No. HS25 «Request for Medication to be Taken During School Hours» հարցաթերթը, որը կարող եմ ստանալ դպրոցից: Եթե փոփոխ դեղը, դեղաբանակը կամ դեղի օգտագործման ժամերը, դպրոցին պետք է ներկայացվի նոր խնդրագիր:

**FORM 5 – ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՉՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ
2015-2016**

Form 5-ը պետք է լրացնեն միայն այն ծնողները, ովքեր չեն ցանկանում, որ իրենց երեխան մասնակցի մարդկային բեղմնավորման (human reproduction) ուսուցմանը և պետք է սույն հարցաթերթը լրացրած վերադարձնեն դպրոց:

Խնդրում եմ, որ գավակս՝

(Տպագիր գրել) Աշակերտի անունը ID համարը Դպրոցը Դասարանը

չմասնակցի հետևյալ թեմաներին վերաբերող ուսուցմանը՝

հետևյալ դասընթացներին՝

Հասկանում եմ, որ այս ուսուցմանը չմասնակցող աշակերտները կներկայանան գրադարան կամ ընթերցասրահ:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը

Ամսաթիվը

**FORM 6 – ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՈՒՆԸ,
 ԼՈՒՍԱՆԿԱՐԸ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՎԻԴԵՈ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ
 ԶԱՆԱԶԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ
 2015-2016**

Form 6 հարցաթերթը պետք է լրացվի աշակերտին արձանագրելու ժամանակ, և կարող է ծնողի կամ խնամակալի ցանկությամբ որևէ ժամանակ թարմացվել: Թույլատրյալն այս թերթիկները ի գործու կմնան այնքան ժամանակ, որ ձեր երեխան հանախի Գլենդելի հանրային դպրոցները: Դա կարելի է ցանկացած ժամանակ փոփոխության ենթարկել՝ կապվելով երեխայի դպրոցի հետ: Վերադարձնել դպրոցի գրասենյակ:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը _____ ID համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

Այս թերթիկով աշակերտը *թույլատրվում* կամ *բացառվում* է նրա անունը, լուսանկարը և կամ վիդեո պատկերները օգտագործելու՝ լրատվական թերթերի, դպրոցի/կրթաշրջանի կայքէջի և զանազան հրատարակությունների (օրինակ՝ դպրոցի տեղեկատու) համար, որոնք լուսանկարվել կամ տեսագրվել են լրատվական միջոցների, կրթաշրջանի/դպրոցի խմբերի կամ կրթաշրջանի հաստատմամբ այլ խմբերի կողմից:

Աշակերտները, երբեմն լուսանկարվում կամ տեսագրվում են լրատվական միջոցների կողմից՝ ծնողներին ու համայնքին տեղյակ պահելու ուսումնական ծրագրերի, ելույթների ու ծրագրերի մասին: Կրթաշրջանը, նահանգային օրենքի համաձայն, համագործակցում է լրատվական միջոցների հետ, թույլ տալով, որ լրատվական միջոցների ներկայացուցիչները ներկայանան մեր դպրոցները և լրատվության նպատակով լուսանկարեն կամ տեսագրեն աշակերտներին: Աշակերտներին կարելի է նաև դպրոցում լուսանկարել կամ տեսագրել նրանց ցուցաբերած առաջադիմության գնահատման ու պարգևատրման հանդեսի, ուսուցման ծրագրերի, ելույթների և ուսումնական խորհրդի ելույթների ընթացքում:

Կրթաշրջանը հարգում է աշակերտների ու նրանց ընտանիքների գաղտնիությունը: Խնդրում ենք ընտրել ներքոհիշյալ երկու տնայնակներից մեկը:

_____ Այո թույլատրում եմ, որ երեխայիս լրիվ անունը, լուսանկարը կամ վիդեո պատկերը հրատարակվի վերոհիշյալ հրատարակություններում:

_____ Ոչ չեմ թույլատրում, որ երեխայիս անունն օգտագործվի հրատարակության համար և չեմ թույլատրում նրան լուսանկարել կամ նրանից վիդեո վերցնել:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը _____ Ամսաթիվը _____

Նշում.- Այս թերթիկը դպրոցին չվերադարձնելու դեպքում, դուք դպրոցի/կրթաշրջանին թույլատրում եք, որ կարողանա օգտագործել ձեր երեխայի անունը, լուսանկարը և վիդեո պատկերները բոլոր հրատարակությունների և լրատվական միջոցների համար:

**FORM 7 – ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ, ԳՈՐԾԱՏԵՐԵՐԻՆ, ԿՈԼԵՋՆԵՐԻՆ ՈՒ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ, 11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԶԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ
2015-2016**

«Ոչ մի երեխա չպետք է անտեսվի» դաշնային օրենքի համաձայն, դպրոցների կրթաշրջանից պահանջվում է՝ զինձառայությանը, գործատերերին, կոլեջներին ու համալսարաններին տրամադրել **ավագ դպրոցի բոլոր 11-րդ և 12-րդ դասարանների** աշակերտների անունները, հասցեներն ու հեռախոսահամարները:

Եթե **ավագ դպրոցի 11-րդ կամ 12-րդ դասարանի** աշակերտ ունեք և **չեք** ցանկանում, որ Գլենդելի կրթաշրջանը բացահայտի ձեր 11-րդ և 12-րդ աշակերտների տեղեկությունները, խնդրում ենք լրացնել ստորև նշված տեղեկությունները, ստորագրել և այն **վերադարձնել ձեր գավակի տնօրենի գրասենյակը**: Եթե ձեր երեխան 18-ը լրացրել է, մա ինքը պետք է ստորագրի այս թերթիկը, ծնողի կամ օրինական խնամակալի փոխարեն: Այս թերթիկը չի վերաբերում ձեր 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտին: Խնդրում ենք այս թերթիկը **չվերադարձնել**, եթե ձեր երեխան 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտ է:

Խնդրում ենք այս թերթիկը մինչև **Ուրբաթ, 2015 թ. Հոկտեմբերի 2-ը վերադարձնել դպրոց**, այլապես բոլոր տեղեկությունները զինձառայությանը կտրամադրվեն **Ուրբաթ, 2015 թ. Հոկտեմբերի 9-ին**:

Եթե այս առումով հարցեր ունեք, խնդրում ենք կապվել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի հետ (818) 241-3111 ներքին 285 հեռախոսահամարով:



**11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԶԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ**

Խնդրվում է ստորև տպագիր գրել **ԲՈԼՈՐ** տեղեկությունները:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը _____ ID համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

Խնդրում եմ գավակիս անունը, հասցեն և հեռախոսահամարը, առանց իմ գրավոր համաձայնության չբացահայտել հետևյալներին (նշել մեկը կամ բոլորը)՝

- Միացյալ ճահանգների զինձառայությանը Գործատերերին
 Կոլեջներին և կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին

Ծնողի ստորագրություն _____

*Աշակերտի ստորագրություն _____
 (ՄԻԱՅՆ եթե 18-ը լրացրած է)

**ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2015-2016**

Նահանգային և դաշնային օրենքը դպրոցների կրթաշրջաններից պահանջում է, որ ամեն տարի ծնողներին, խնամակալներին և չափահաս աշակերտներին տեղեկացնեն նրանց որոշակի իրավունքների ու պատասխանատվությունների մասին: Կալիֆոռնիա նահանգի կրթական օրենսգրքի 48982 հոդվածի համաձայն, ծնողները գրավոր պետք է հայտնեն, որ տեղեկացել են այս օրենսգրքի հոդվածների մասին: Ձեր ստորագրությամբ դուք չեք նշում յուրահատուկ որևէ ծրագրի մասնակցելու ձեր համաձայնությունը, այլ պարզապես հաստատում եք, որ ստացել եք օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցագիրը: **Բոլոր ծնողներն անխտիր պետք է ստորագրեն Form 1-ը և 2-ը և բոլոր մյուս հարցաթերթերը, (այս տեղեկագրի առաջին էջերը) և իրենց երեխաների միջոցով վերադարձնեն դպրոց:** Որևէ հարց ունենալու դեպքում, խնդրում ենք կապվել ձեր երեխայի դպրոցի հետ:

ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրանով, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի բոլոր ծնողներին և աշակերտներին տեղեկացնում ենք, որ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն առաջնորդվում է Title VI, 1964 թվականի Քաղաքացիական իրավունքների հրամանագրի, Title IX-ի, 1972 թվականի կրթական բարեփոխումների հրամանագրի և 1973 թվականի իրավունքների վերականգնման հրամանագրի 504 հոդվածի համաձայն, ինչպես պահանջվում է դաշնային օրենքով: Title VI և Title IX հրամանագրերը հարգելով աշակերտի տարիքը, սեռը, սեռական կողմնորոշումը, ծագումը, տոհմը, ցեղը, ազգությունը, կրոնը, մաշկի գույնը և ֆիզիկական կամ մտային անկարողությունը, արգելում են նրա դեմ որևէ խտրականություն, կազմակերպված կամ հովանավորված կրթաշրջանի կողմից՝ ուսումնական կամ աշխատանքային որևէ ծրագրում: Հոդված 504-ը արգելում է հաշմանդամությանը վերաբերող որևէ տեսակի խտրականություն: Կրթաշրջանի քաղաքացիականությունն է՝ բոլոր աշակերտներին առանց խտրականության տրամադրել կրթական, աշխատանքային, մարզական և խորհրդատվության հնարավորություններ: Անգլերեն լեզվին չտիրապետելն արգելվում է հանդիսանալ մասնակցելու սույն ծրագրերին: Ստորև դուք կգտնեք կրթաշրջանի ղեկավար պատասխանատուների և նրանց պատասխանատվության ներքո ծրագրերի անունները:

Գերատեսչի օգնական (ուսումնական ծառայություններ)	Տարրական և միջին դպրոցներ Ընդհանուր ուսումնական ծրագիր Վաղ շրջանի կրթության և արտաժամյա ծրագրեր Մարմնամարզություն Տարրական Մագնետ դպրոցներ Երկլեզվյան/FLAG ծրագիր
Դիրեկտորի օգնական, ուսումնական ծառայություններ	Խորհրդատվություն և առաջնորդություն Աշակերտների աջակցման ծառայություններ
Գերատեսչի օգնական (Հատուկ կրթություն)	Հոդված 504, աշակերտներ, ուսումնական ծրագրեր
Գերատեսչի օգնական (Human Resources)	Հոդված 504, աշխատանք, ծառայողներ Title IX
Ավագ դիրեկտոր, միջնակարգի ծառայություններ	Ավագ դպրոցներ/Ատլետիկաներ
Փոխ-դիրեկտոր, կատեգորիկ ծրագրեր	Կատեգորիկ ծրագրեր Գանգատարկման ընթացակարգեր

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն իր հանձնառությունն է համարում, որ յուրաքանչյուր անհատի ընձեռնի ուսման հավասար հնարավորություն: Կրթաշրջանի ծրագրերը և աշխատանքները գերծ պետք է մնան խտրականությունից, այդ թվում՝ **հաշմանդամության, սեռի, սեռի նանաչման, սեռի արտահայտման, ազգության, ցեղի, կրոնի, սեռական կողմնորոշման կամ սույն բնութագրությամբ անձի կամ խմբի հետ հարաբերություն ունենալու համար:** Խտրականության հարցին առնչվող գանգատները հետաքննվում են Գանգատարկման ընթացակարգի միջոցով: Նման գանգատները պետք է ներկայացվեն ոչ ավելի ուշ քան վեց ամիս հետո՝ առաջին անգամ տեղի ունեցած ենթադրյալ խտրականությունից: Գանգատարկման հարցաթերթի մասին հավելյալ տեղեկություններ կամ աջակցություն ստանալու համար, կապվել Կատեգորիկ գրասենյակի դիրեկտոր՝ Դոնա. Cynthia McCarty-Foley հետ 818-241-3111 ներքին 457 հեռախոսահամարով:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՑԱՆՔ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի 51550 հոդվածի համաձայն, դպրոցների կրթաշրջաններից պահանջվում է ամեն տարի յոթից տասներկուերորդ դասարանների աշակերտների ծնողներին տեղեկացնել ուսումնական այն ծրագրերի մասին, որոնք «քացատրում, լուսաբանում կամ ֆննարկում» են վնասակար հիվանդությունները՝ սեռական հարաբերությունների միջոցով փոխանցվող հիվանդությունները, AIDS-ը կամ քեղմնավորման համակարգը, ինչպես նաև սույն ուսուցմանը չմասնակցելու ծնողի խնդրագիրը: Այս թեմային առնչվող ուսուցման առարկաներից են՝

Պահանջվում է
Կենսագիտություն- 7-րդ

Առողջապահություն- 9-րդ

Ընտրական դասեր

Բնախոսություն- 10-րդ, 11-րդ կամ 12-րդ
Կազմախոսություն- 9-րդ, 10-րդ, 11-րդ կամ 12-րդ
Մարդակազմություն- 9-րդ, 10-րդ, 11-րդ կամ 12-րդ

Կենսաբանություն- 9-րդ, 10-րդ, 11-րդ կամ 12-րդ
Երևիսյի գարգացում- 11-րդ կամ 12-րդ
Գործընկերի աջակցություն և առաջնորդություն- 10-րդ, 11-րդ կամ 12-րդ

Ուսուցման նյութերի կամ դասընթացների բովանդակության մասին որոշակի հարց ունենալու դեպքում, խնդրում ենք կապվել այդ դասընթացների ուսուցիչների հետ: Ավագ դպրոցներում օգտագործվող ուսուցման նյութերը տրամադրելի են սույն դպրոցներում ֆննման համար: Հավելյալ տեղեկությունների համար կապվել տնօրենի հետ:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 51555 հոդվածի համաձայն, նախքան սեռական հարաբերությամբ փոխանցվող հիվանդությունների, AIDS-ի, մարդկային սեռական հարաբերություն կամ ընտանեկան կյանքի մասին նախակրթարանից մինչև վեցերորդ դասարանների աշակերտներին ուսուցողական տեղեկություններ տալը, կրթաշրջանը պետք է աշակերտների ծնողներին կամ խնամակալներին գրավոր կերպով քացատրի, թե ինչի մասին է տեղեկություն տրվում նրանց երևիսյին: 51201.5 (d) հոդվածով կրթաշրջաններից պահանջվում է, որ յոթերորդից մինչև տասներկերորդ դասարանների աշակերտների ծնողներին կամ խնամակալներին գրավոր քացատրվի AIDS հիվանդության կանխարգելման ուսուցման նպատակի մասին: Ծնողը կամ խնամակալը կարող է պահանջել, որ երեխան չմասնակցի AIDS հիվանդության կանխարգելման ուսուցման: Ծնողը կամ խնամակալը իրավունք ունի դպրոցի Աշակերտական ծառայությունների գրասենյակից պահանջել, որ իրեն տրամադրեն AIDS հիվանդության կանխարգելման ուսուցմանն առնչվող Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 51201.5 և 51553 հոդվածների պատճենները:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 51554 հոդվածի համաձայն, եթե ծնողին պատշաճորեն չի տեղեկացվել, ապա նրա երեխան չպետք է ուսուցողական տեղեկություն ստանա սեռական հարաբերությամբ փոխանցվող հիվանդությունների, AIDS-ի, մարդկային սեռական հարաբերության կամ ընտանեկան կենսակերպի մասին՝ այնպիսի մի հավաքում, որը կազմակերպվել է կրթաշրջանի պաշտոնյա ուսուցչի կողմից, կամ որևէ ուսուցողական ծրագրում, որը ձևակերպվել է դրսի գործակալության կամ հյուր բանախոսի կողմից:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 51240 հոդվածը նշում է, որ «Եթե առողջապահության, ընտանեկան կենսակերպի և սեռական հարցերի վերաբերյալ ուսուցողական որևէ բաժին հակասում է աշակերտի ծնողի կամ խնամակալի կրոնական դավանանքին ու համոզմունքներին ապա, ծնողի կամ խնամակալի գրավոր խնդրանքով, սվյալ աշակերտը կարող է չմասնակցել ուսուցողական հիշյալ բաժնին: Սույն հոդվածում օգտագործված «կրոնական դավանանք և համոզմունքներ» արտահայտությանը մաս են կազմում նաև անձնական բարոյագիտական համոզմունքները: **Եթե ցանկանում եք, որ ձեր զավակը չմասնակցի այս ուսուցմանը, խնդրում ենք լրացնել և դպրոցի տնօրենին վերադարձնել Form 5 հարցաթերթիկը:**

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՑԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 49480 հոդվածի համաձայն, դուք որպես ծնող կամ խնամակալ, դպրոցի բուժֆրոջը կամ արտոնյալ որևէ պաշտոնյայի պետք է տեղեկացնեք, եթե ձեր երեխան խրոնիկական հիվանդության պատճառով կանոնավոր դեղ է ընդունում և հայտնեք դեղաչափը և բժշկի անունը, որպեսզի հարկ եղած դեպքում և աշակերտի ապահովության համար, բուժֆուրը ձեր արտոնյալով կապ հաստատի նրա բժշկի հետ և դպրոցի անձնակազմին փոխանցի աշակերտի օգտագործած դեղի կողմնակի ազդեցությունները, դեղը չընդունելու կամ որոշված դեղաչափից ավելի ընդունելու հետևանքները: **Եթե ձեր երեխան հատուկ դեղ է ընդունում, խնդրում ենք լրացնել Form 4 հարցաթերթիկը և վերադարձնել դպրոցի առողջապահության գրասենյակը:**

Նկատի առնելու կետեր՝

1. Խոսեցե՛ք ձեր երեխայի բժշկի հետ նրա դեղորայքի ծրագրի մասին, որպեսզի ձեր երեխան ստիպված չլինի դեղ ընդունել դպրոցում:
2. Եթե ձեր երեխան կանոնավորապես դեղ է ընդունում ընթացիկ առողջական խնդիրների համար, նույնիսկ եթե նա դեղն ընդունում է միայն տանը, երկտողով տեղեկացրե՛ք դպրոցի բուժֆրոջը կամ դպրոցի պաշտոնյային, յուրաքանչյուր տարեշրջանի սկզբում: Դուք պետք է ցանկացրե՛ք դեղերի անունները, դրանց ընդունման դեղաչափը և դեղը նշանակող բժշկի անունը (EC 49480):
3. Եթե ձեր երեխան դեղը պետք է ընդունի դպրոցում, նրա հետ երկտող ուղարկե՛ք դպրոց, ինչպես նաև երկտող ձեր երեխայի բժշկից, որը լիազորված է բժշկությամբ զբաղվել Կալիֆորնիա նահանգում: Ամեն տարի, ուսումնական տարեշրջանի սկիզբը, թարմացրե՛ք դպրոցին տրամադրած ձեր տեղեկությունները՝ եթե որևէ փոփոխություն կա դեղորայքի, ցուցումների, կամ բժշկի վերաբերյալ (EC 49423):
4. Որպես ծնող կամ խնամակալ, դուք դպրոցին պետք է տրամադրե՛ք այն բոլոր դեղերի անունները, որոնք ձեր երեխան պետք է ընդունի դպրոցական օրվա ընթացքում: Դուք կամ մի այլ չափահաս պետք է դեղը բերե՛ք դպրոց, բացառությամբ այն դեպքում, երբ ձեր երեխային թույլատրվում է դեղն իր հետ կրել:
5. Վերահսկված բոլոր դեղերը, օրինակ Բիթալինը, դպրոցին հանձնելիս, պետք է հաշվել և գրանցել դեղամատյանում: Դուք կամ ուրիշ մի չափահաս, որը հանձնում եք դեղը պետք է դեղամատյանը ստորագրելով հաստատե՛ք հաշվված քանակը:

Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության օրենսգրքի 124100 և 124105 հոդվածներ.-
The Child Health and Disability Prevention (CHDP) ծրագրի համաձայն աշակերտը ֆիզիկական լրիվ բնութագրում պետք է ունենա՝ նախքան առաջին դասարան ընդունվելը: Այս պահանջը բավարարվում է, եթե այս բնութագրումը կատարվել է մանկապարտեզում, բայց ոչ ավելի շուտ քան 18 ամիս նախքան առաջին դասարան ընդունվելը: Աշակերտը կարող է չարձանագրվել, եթե այս պահանջը չբավարարվի կամ մերժումնագիր չստորագրվի: Քննություններն անվճար են Մեդի-Քալ ունեցող երեխաների, ինչպես նաև Մեդի-Քալ չունեցող բայց ցածր եկամուտով երեխաների համար: Ֆիզիկական սույն քննությունները կարելի է կատարել տեղական County Health Department կոչվող բաժանմունքում կամ CHDP ծրագրի արտոնյալ առողջապահական խնամք մատակարարողների մոտ:

Կալիֆորնիայի Կրթական օրենսգրքի 49403 հոդվածի համաձայն, Կրթաշրջանը կարող է վարակիչ հիվանդությունների պատվաստումների կապակցությամբ աշակերտի համար կարգադրություն կատարել, եթե նրա ծնողը գրավոր համաձայնում է, որ իր երեխան կարող է այդ պատվաստումները ստանալ: Մանկապարտեզի և երեխայի խնամատարության կենտրոններում արձանագրվող բոլոր երեխաները **պետք է** կատարեն Hepatitis B, պոլիո, դիֆտերիա, կապույտ հազ և տիտանոս պատվաստումներ: Մանկապարտեզ արձանագրվող աշակերտից պահանջվում է նաև կարմրուկի երկու դոզա պատվաստում, որոնցից առնվազն մեկը պետք է լինի MMR-ի և մյուսը ջրծաղիկի պատվաստում: Յոթերորդ դասարան արձանագրվող աշակերտից պահանջվում է Hepatitis B-ի պատվաստում և MMR-ի երկրորդ դոզա: Tdap-ի մեկ դոզա է պահանջվում 10 տարեկանից հետո, 7-րդից 12-րդ դասարանների աշակերտների համար:

2014 թվականի Հունվարի 1-ից սկսյալ, աշակերտին բժշկական պատվաստումներից զերծ պահելու ստորագրված մերժումնագրերը, պետք է ներառի առողջապահական հարցերով նահանգային վարչության կողմից որոշված այն հարցաթերթիկը, որը ստորագրված է 1) առողջապահական հարցերով փորձագետի կողմից, որը ծնողին կամ օրինական խնամակալին տեղեկություններ է տրամադրել բժշկական պատվաստումների օգուտների և վտանգների, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների վտանգների մասին և 2) ծնողի կամ օրինական խնամակալի կողմից, որպես ապացույց, որ նա ստացել է առողջապահական հարցերով փորձագետի տեղեկությունները:

Կալիֆորնիայի Կրթական օրենսգրքի հոդված 49423 - Այն աշակերտները, ովքեր դպրոցական ժամերի ընթացքում պետք է ընդունեն բժշկի կողմից նշանակված դեղեր, պետք է կրթաշրջանին ներկայացնեն բժշկի հանձնարարագիրը, որտեղ հստակորեն նշված է դեղաչափը, օգտագործման ձևը և ժամը, ինչպես նաև՝ կրթաշրջանին ուղղված բժշկի ցուցումներին հետևելու խնդրագիրը:

Կալիֆորնիայի Կրթական օրենսգրքի հոդված 49451 - Ծնողները կարող են ամեն տարի դպրոցի տնօրենին ներկայացնել իրենց երեխային ֆիզիկական քննությունից բացառելու խնդրագիրը: Եթե ապացուցվի, որ աշակերտը տառապում է վարակիչ հիվանդությամբ, այդ դեպքում աշակերտը չպետք է հանձնի դպրոց:

Կալիֆորնիայի Կրթական օրենսգրքի հոդված 49452.7 - Կալիֆորնիայի Կրթության վարչությունը համագործակցելով Կալիֆորնիայի հանրային առողջապահական բաժանմունքի, Ամերիկայի շաֆարախտի ընկերակցության, Կալիֆորնիայի բուժֆույերի կազմակերպության և Օրենջ Քաունթիի մանկաբուժական հիվանդանոցի համագործակցությամբ, մշակել է տեղեկություններ՝ 2-րդ տեսակի շաֆարախտի մասին, որոնք պետք է տրամադրվեն 7-րդ դասարանների աշակերտների ծնողներին կամ խնամակալներին, սկսյալ 2010 թվականի Հունիս 1-ից:

Նկարագրություն.-

- 2-րդ տեսակի շաֆարախտն ամենատարածված ձևն է չափահասների մոտ:
1. Մինչև մի քանի տարի առաջ, 2-րդ տեսակի շաֆարախտը հազվադեպ էր երեխաների մոտ, սակայն դա ավելի է ընդհանրացել, նամանավանդ քաղցր պատանիների մոտ:
 2. Ամերիկայի միացյալ Նահանգների հիվանդությունների վերահսկման և կանխման (CDC) կենտրոնի համաձայն, 2000 թվականից հետո ծնված երեք ամերիկացի երեխաներից մեկը իր կյանքի ընթացքում տառապելու է 2-րդ տեսակի շաֆարախտով:
- 2-րդ տեսակի շաֆարախտն ազդում է մարմնի շաֆարը (գլուկոզ) որպես էներգիա օգտագործելու համակարգի վրա:
1. Մարմինը սկսում է սննդամթերքի ածխաջրերը գլուկոզի վերածել, որը հիմնական վառելիքն է մարմնի քիչների համար:
 2. Ենթաստամոքսային գեղձը սկսում է ինսուլին արտադրել, մի հորմոն, որը գլուկոզն արյան միջից փոխանցում է քիչներին:
 3. 2-րդ տեսակի շաֆարախտի դեպքում, տղաների մարմնի քիչները դիմադրում են ինսուլինի ազդեցությանը, ուստի բարձրանում է արյան շաֆարի մակարդակը:
 4. Ժամանակի ընթացքում, արյան գլուկոզն հասնում է վտանգավոր բարձր մակարդակի, որը կոչվում է՝ hyperglycemia.
 5. Hyperglycemia-ն կարող է առողջական խնդիրների պատճառ դառնալ, ինչպես օրինակ՝ սրտի տագնապ, կուրություն և երիկամային խանգարում:

2-րդ տեսակի շաֆարախտի հետ կապված վտանգներ.- Առաջարկվում է, որ 2-րդ տեսակի շաֆարախտի հետ կապված ազդանշաններ ցույց տվող կամ հավանաբար վտանգի առջև կանգնած աշակերտները բնական այդ հիվանդության համար:

Հնտագոտողներն ամբողջապես չեն հասկանում, թե ինչու են որոշ մարդիկ ունենում և ուրիշները չեն ունենում 2-րդ տեսակի շաֆարախտ, սակայն հետևյալ ազդակներին է կապված երեխաների մոտ հետզհետե բարձրացող 2-րդ տեսակի շաֆարախտ ունենալու վտանգները:-

1. **Քաշը բարձր լինելը:** Երեխաների մոտ 2-րդ տեսակի շաֆարախտի ամենամեծ պատճառը քաշի բարձր լինելն է: Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրեթե հինգ երեխաներից մեկի քաշը բարձր է: Դա պատճառ է դառնում, որ ավելի բարձրանա շաֆարախտով վարակվելու հավանականությունը:
2. **Ընտանիքի շաֆարախտ ունենալու անցյալը:** Տուժած երեխայի կամ երիտասարդի առնվազն մեկ ծնողը կարող է շաֆարախտ ունենալ կամ ընտանիքի շաֆարախտի անցյալ ունենալ:
3. **Ակտիվ չլինելը:** Ակտիվ չլինելը պակասեցնում է ինսուլինի նկատմամբ մարմնի դիմադրողականությունը:
4. **Ցեղային/էթնիկական որոշակի խմբերը:** Բնիկ ամերիկացիները, աֆրիկացի ամերիկացիները, իսպանացի/լատինամերիկյան կամ ասիացի/խաղաղ-ովկիանոսյան քնակիչներն ավելի շատ հավանականությամբ են վարակվում 2-րդ տեսակի շաֆարախտով քան մյուս այլ ցեղերը:
5. **Սեռական հասունությունը:** Արրունգի տարիքի հասած պատանիներն ավելի շատ հավանականությամբ են հիվանդանում 2-րդ տեսակի շաֆարախտով քան փոքր տարիքի երեխաները, քանի որ հավանաբար բարձրանում է հորմոնների մակարդակը և կարող է ինսուլինի հանդեպ դիմադրություն առաջացնել՝ մարմնական արագ աճի ու զարգացման փուլի ընթացքում:

2-րդ տեսակի շաֆարախտի ազդանշաններն ու ախտանշանները: 2-րդ տեսակի շաֆարախտի ազդանշաններն ու ախտանշանները դանդաղորեն են երևան գալիս երեխաների մոտ և հավանաբար կարող են որևէ ազդանշան ցույց չտալ: Այնուամենայնիվ, ինսուլինի դիմադրությամբ կամ 2-րդ տեսակի շաֆարախտով ոչ բոլորն են ցույց տալիս այս ազդանշանները և այնպայման չէ որ այս ախտանշանները ցույց տվող անձինք ունեն շաֆարախտ՝

1. Մեծանում է քաղցի/սովի պահանջը, նույնիսկ ուտելուց հետո
2. Անբացատրելի քաշի պակասում
3. Մեծանում է ծարավը, բերանի չորացումը և հանախակի միզումը
4. Չափազանց հոգնածություն
5. Պոտոր տեսողություն
6. Վերքի դանդաղ ապափնում
7. Մուգ թավշային մաշկի գույն՝ նամանավանդ վզի և թևատակի մասերում
8. Աղջիկների մոտ անկանոն դաշտան, դաշտանադադար և կամ երեսի/մարմնի վրա չափից ավելի մազակալում:
9. Բարձր արյան ճնշում կամ անբնական արյան մարզի բարձրացում

2-րդ տեսակի շաֆարախտի կանխամ մեթոդներն ու բուժումը: Առողջ ապրելակերպի ընտրությունը կարող է կանխել և բուժել 2-րդ տեսակի շաֆարախտը: Նույնիսկ շաֆարախտի ընտանեկան անցյալի դեպքում, միշտ չափով առողջարար սնունդը և կանոնավոր մարզանքը կարող է օգնել երեխային, որ իր քաշը և արյան գլուկոզան նորմալ վիճակում պահի:

1. **Կերեֆ սննդաբար ուտելիքներ:** Կատարեֆ սննդի խելացի ընտրություն: Կերեֆ այն կերակուրները, որոնց մարզը և կալորիան ցածր է:
2. **Ֆիզիկապես ավելի գործունյա եղեֆ:** Բարձրացրեֆ ֆիզիկական գործունեությունն առնվազն օրական 60 րոպե:
3. **Դեղ վերցրեֆ:** Եթե սնունդը և մարզանքը բավարար չեն հիվանդությունը զսպելու համար, հավանաբար անհրաժեշտ լինի 2-րդ տեսակի շաֆարախտը բուժել դեղերով:

2-րդ տեսակի շաֆարախտը բուժելու առաջին քայլը բժշկին այցելելն է: Բժիշկը կարող է որոշել, եթե երեխան իր տարիքի, քաշի և հասակի համեմատությամբ քաշը բարձր է, թե ոչ: Բժիշկը կարող է նաև երեխայի արյան գլուկոզան չափելու ֆննություն պահանջել, իմանալու եթե երեխան շաֆարախտ ունի կամ ընդունակ է շաֆարախտ ունենալ (մի պայման, որը կարող է հանգեցնել 2-րդ տեսակի շաֆարախտի):

Շաֆարախտի տեսակները ստուգելու ֆննություններից են՝

1. **Glycated hemoglobin (A1C) ֆննությունը:** Արյան այս ֆննությունը չափում է ավելի քան երկու երեֆ ամսվա արյան շաֆարը: A1C ֆննության 6.5 կամ ավելի բարձր տոկոսը, երկու առանձին ֆննությունների ընթացքում, ցույց է տալիս շաֆարախտ:
2. **Պատահական արյան շաֆարի ֆննությունը (ծով չպահած):** Արյան այս ֆննությունը կատարվում է պատահական ժամանակում: Յուրաքանչյուր դիսխիտրի 200 կամ ավելի միլիգրամ արյան շաֆարի մակարդակը ցույց է տալիս շաֆարախտ: Այս ֆննությունը պետք է հաստատվի ծով պահած արյան գլուկոզայի ֆննությամբ:
3. **Մով պահած արյան ֆննություն:** Արյան այս ֆննությունը կատարվում է գիշերը չընթրելուց հետո՝ առավոտյան: 100 միլիգրամից ցածր նորմալ է: 100-ից 120 միլիգրամը համարվում է շաֆարախտի ընդունակ, իսկ 120 միլիգրամից բարձր, երկու առանձին ֆննությունների ընթացքում, համարվում է շաֆարախտ:
4. **Գլուկոզայի հանդուրժողականության ֆննություն:** Այս ֆննությունը ցույց է տալիս արյան շաֆարի չափը՝ մի քանի ժամվա ընթացքում շաֆարահամ հեղուկ խմելուց հետո: Երկու ժամից հետո 200 միլիգրամը ցույց է տալիս շաֆարախտ:

Երեխաների մոտ 2-րդ տեսակի շաքարախտը կանխարգելիկ/բուժելի է և այս տեղեկությունները նպատակադրված են այս հիվանդության մասին իրազեկություն տալու համար: Այս մասին ցանկացած որևէ հարցի համար կապվե՛ք դպրոցի բուժֆրոնջ, դպրոցի ղեկավարի կամ քոչի հետ:

Աղբյուրներ՝

- American Diabetes Association Clinical Journal
- Helping Children with Diabetes Succeed: a Guide for School Personnel
- KidsHealth
- Mayo Clinic
- National Library of Medicine (NLM) and National Institutes of Health's (NIH) MedLine
- US Centers for Disease Control and Prevention

Հարցեր ունենալու դեպքում կապվե՛ք՝ Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի հետ (Student Support Services)– www.cde.ca - 916-319-0284

Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի 49452.8 հոդվածը այժմ պահանջում է, որ հանրային դպրոցներում Թրանզիշնալ մանկապարտեզ/մանկապարտեզ կամ առաջին դասարանը սկսելու համար, ձեր երեխան մինչև Մայիս 31-ը, կատարի բերանի առողջության ֆնկտիոն: Օրենքը սահմանում է, որ սույն ֆնկտիոնը պետք է կատարի արտոնագրված ատամնաբույժը կամ արտոնագրված մասնագետը: Այս պահանջը բավարարվում է, եթե բերանի առողջության ֆնկտիոնը կատարվել է 12 ամիսների ընթացքում՝ նախքան ձեր երեխայի դպրոց սկսելը: Եթե դուք չե՛ք կարող ձեր երեխային սույն ֆնկտիոնը տանել, դուք կարող ե՛ք այդ պարտադրանքից ազատվել՝ լրացնելով պահանջված հարցաթերթիկի մաս 3-ը:

Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի 49475 հոդվածը – Գլխուղեղային ցնցումներ և գլխի վնասվածքներ.– Մարզական ծրագրեր առաջակող կրթաշրջաններն ամեն տարի պետք է պահանջեն, որ գլխուղեղային ցնցումների և վնասվածքների մասին տեղեկագիրը ստորագրվի ու դպրոց վերադարձվի ծնողի կամ խնամակալի կողմից, նախքան մարզիկ աշակերտի մարզավարժությունները կամ մրցությունները սկսելը: Մարզիկներից խնդրվում է կապվել մարզական հարցերի պատասխանատուի հետ՝ պահանջվող հիշյալ տեղեկագիրը ստանալու համար: Սա չի վերաբերում այն աշակերտներին, ովքեր դպրոցական օրերին մասնակցում են մարմնամարզության դասընթացին:

ԳԼԽՈՒՂԵՂԱՅԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ 2015-2016

ԳԼԽՈՒՂԵՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՑԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ ԳԼԽՈՒՂԵՂԱՅԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ (Կիրառելի է միայն 2015-2016 ուստարվա համար)

ԻՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ.-

Գլխուղեղային ցնցումը ուղեղային այն վնասվածքն է, որն առաջանում է գլխի հարվածից կամ ցնցումից կամ մարմնային որևէ հարվածից, որի ուժգնությունը փոխանցվում է գլխին: Գլխուղեղային ցնցումները տարբերվում են մեղմից ծանր աստիճանի և կարող են խանգարել ուղեղի նորմալ աշխատանքը: Թեև ցնցումներից շատերը մեղմ են, սակայն **բոլոր ցնցումները համարվում են լուրջ և կարող են բարդություններ առաջացնել, այդ թվում երկարատև ուղեղի վնասվածք և մահ, եթե ժամանակին չախտորոշվեն և չբուժվեն:** Դժվար է գզալ գլխուղեղային ցնցման ախտանշանները, քանի որ սպորտային ցնցումներից շատերը պատահում են առանց գիտակցության կորստի: Ձանագան նշաններ ու ախտանշաններ կան, որոնք կարող են երևան գալ վնասվածքից անմիջապես հետո կամ կարող են ժամեր կամ օրեր տևել մինչև դրանք ամբողջապես երևան գան: Եթե ձեր երեխան ձեզ հայտնում է ցնցման որևէ ախտանշան, կամ եթե դուք ցնցման նշաններ եք նկատում, անմիջապես դիմեք բժշկի օգնության:

Ախտանշաններ

- Գլխացավ
- «Գլխի մեջ ննջման զգացում»
- Սրտխառնուժ կամ փսխում
- Պարանոցի ցավ
- Հավասարակշռությունը պահելու դժվարություն կամ գլխապտույտ
- Պղտորված կամ երկակի տեսողություն
- Լույսի կամ ձայնի զգայնություն
- Դանդաղաշարժության կամ դանդաղկոտության զգացում
- Մտախալապատ կամ երերունության զգացում
- Քնկոտություն
- Քնի սովորության փոփոխություն
- Ամենգիյա կամ հիշողության կորուստ
- «Լավ չզգալու իրավիճակ»
- Հոգնածություն կամ թուլություն
- Տխրություն
- Նյարդախնդրություն կամ անհանգստություն
- Դյուրագոգություն
- Ավելի էմոցիոնալ կամ զգացմունքային իրավիճակ
- Շփոթմունք
- Կենտրոնացման կամ հիշողության դժվարություն (մոռանալ խաղի կանոնները)
- Նույն հարցի անընդհատ կրկնություն

Գլխուղեղային ցնցումով խաղի կամ մրցությանը վերադառնալու վտանգներ

Գլխուղեղային ցնցումով կամ ախտանշաններով մարզիկը պետք է անմիջապես հեռանա խաղից: Գլխուղեղային ցնցումով կամ ախտանշաններով երիտասարդ մարզիկի խաղի շարունակումը նրան հատկապես խոցելի է դարձնելու առողջական ավելի մեծ վնասվածքի: Գլխուղեղային ցնցում պատահելուց հետո, որոշ ժամանակահատվածում կա ավելի երկար վտանգ, մասնավորապես, եթե մարզիկը ստանա մի այլ ցնցում, նախքան առաջին ցնցումի լիովին ապաքինումը: Դա կպահանջի ավելի երկար ապաքինում, կամ նույնիսկ գլխուղեղային ուռուցք (երկրորդ հետևանք) կործանարար և նույնիսկ մահատարած հետևանքներով: Հայտնի է, որ անչափահաս կամ պատանի մարզիկները հաճախ չեն գեկուցում վնասվածքները, այդ թվում գլխուղեղային ցնցումը: Ուստի, ղեկավար մանկավարժներին, մարզիչներին, ծնողներին ու աշակերտներին այդ ուղղությամբ կրթելը հանդիսանում է մարզիկի աշակերտի անվտանգության գլխավոր ազդակը:

Եթե կարծում եք, որ ձեր երեխան գլխուղեղային ցնցում է ստացել

Կալիֆորնիայի համադպրոցական կազմակերպությունը (The California Interscholastic Federation (CIF)) պահանջում է, որ գլխուղեղային վնասվածքով կամ ցնցումով մարզիկի աշակերտը, այդ ժամանակ և ամբողջ օրը, հեռացվի խաղից և որոշ ժամանակ ուշադրությամբ վերահսկողության ներքարկվի: Խաղից հեռացված աշակերտը չի կարող խաղի վերադառնալ, մինչև չհնմվի գլխուղեղային ցնցման հարցով լիազորված ու վերապատրաստված բուժապասարկողի կողմից և խաղին վերադառնալու համար բուժապասարկողից ստանա գրավոր արտոնություն:

Դուք պետք է նաև ձեր երեխայի մարզիչին տեղեկացնեք, եթե կարծում եք, որ ձեր երեխան գլխուղեղային ցնցում է ստացել: Հիշեք, որ ավելի լավ է չմասնակցել մեկ խաղի, քան չմասնակցել ամբողջ տարվա խաղերին: Եվ երբ երկմտանք է լինում, առաջնահերթությունը մարզիկի առողջությունն է:

Գլխուղեղային ցնցման վերջին տեղեկությունների մասին դուք կարող եք այցելել <http://www.cdc.gov/ConcussionInYouthSports> կայքէջը:

ԱՇԱԿԵՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կրթական օրենսգրքի հոդված 49472-ի համաձայն, կրթաշրջանը կարող է վթարային ապահովագրություն տրամադրել աշակերտներին՝ այն վնասվածքների համար, որոնք պատահում են դպրոցական սովորական օրերին, դպրոցի կողմից հովանավորվող աշխատանքների կամ դպրոցական փոխադրամիջոցներով տեղից տեղ գնալու ժամանակ: Աշակերտական ապահովագրության տեղեկաբերքիկները նախակրթարանից վեցերորդ դասարանների յուրաքանչյուր աշակերտի հետ տուն են ուղարկվում ուսումնական նոր տարեշրջանի առաջին շաբաթը: Այնուհետև,

այդ հարցաբերքիկները տրվում են նորեկ աշակերտների ծնողներին: Միջին և ավագ դպրոցներում աշակերտի ապահովագրության վերաբերյալ հարցաբերքիկները կարելի է ստանալ յուրաքանչյուր դպրոցից: Ծնողը կամ խնամակալը վճարում է ապահովագրման ծախսերը:

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. 6-ից 18 տարեկան անչափահաս աշակերտն ենթակա է պարտադիր կրթության, բացառությամբ ազատ լինելու պարագայից, և պարտավոր է հանախել իր շրջանի դպրոցը, ուր գտնվում է իր ծնողի կամ օրինական խնամակալի բնակավայրը:
2. Աշակերտը կարող է հանախել կրթաշրջանի դպրոցներից որևէ մեկը, եթե նա ունենա հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.- տեղավորված լինի կրթաշրջանի սաստիկներից ներս խնամատարական տնում կամ լիազորված մանկական հիմնարկում: Տեղավորման համաձայնության և Բարեկեցության օրենքի համաձայն, **Փոստեր աշակերտը, որը հանախում է իր շրջանի դպրոցը**, ազատագրված աշակերտը, որն ապրում է կրթաշրջանի սահմաններում, աշակերտը, որն ապրում է խնամատարի տանը, որը գտնվում է կրթաշրջանի սահմաններում կամ աշակերտը, որն ապրում է նահագնային հիվանդանոցում, որը գտնվում է կրթաշրջանի սահմաններում:
3. Տարիներ շարունակ, աշակերտի հանախման դպրոցը հանդիսացել է նրա շրջանի դպրոցը՝ դրա հարմարություններից լավագույնն օգտվելու համար: Այնուամենայնիվ, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը շարունակում է նկատի առնել թույլտվության խնդրագրերը: Կրթաշրջանն առաջարկում է հետևյալ տարրերակները՝

A. **Ներկրթաշրջանային թույլտվություն (Intradistrict Permit)** - Այս թույլտվությունը նկատի է առնվում անձնական այնպիսի կարիքների դեպքում, ինչպիսիք են՝ հարմարվելու դժվարությունը, ակնկալվող տեղափոխությունը, կրթաշրջանում պաշտոնավարելը, երեխայի մասնավոր խնամատարությունը, բույր և եղորոք և ուսումնական հատուկ ծրագրերի դեպքերը: Ներկրթաշրջանային թույլտվության սույն դիմումագիրը կարող եմ ստանալ կրթաշրջանի Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակից:

Intradistrict Open Enrollment – EC 35160.5(b) Կրթաշրջանի քնակիչները կարող են դիմել և տեղ լինելու դեպքում իրենց երեխային արձանագրել կրթաշրջանի որևէ դպրոցում: Կրթաշրջանի յուրաքանչյուր դպրոցի տեղեկությունները տրամադրվում են կրթաշրջանի կայքէջով:

B. **Միջկրթաշրջանային թույլտվություն (Interdistrict Permits)** – Ծնողը կամ օրինական խնամակալը կարող է դիմել դպրոցի կրթաշրջանին, իր երեխային այլ կրթաշրջանի դպրոցում արձանագրելու թույլտվություն ստանալու համար: Այս թույլտվությունը նկատի է առնվում հետևյալ մի քանի պայմաններով՝ ակնկալվող տեղափոխություն, պատեհություն, նախկին հանախում, մասնավոր կերպով երեխայի խնամատարության պարագա (Ն-8-րդ), բույր ու եղորոք պարագա, ծնողի աշխատանք (Մ-8-րդ) և Ազատ արձանագրության օրենք (EC § 46600): Միջկրթաշրջանային թույլտվության խնդրագիրը պետք է ներկայացվի շրջանի կրթաշրջանի կողմից և պետք է հաստատվի երկու կրթաշրջանների միջև: Կրթաշրջանները կարող են միջկրթաշրջանային փոխանցման հարցում համաձայնության գալ, մեկ կամ ավելի աշակերտի համար, հինգ տարվա ժամանակահատվածով: Սույն համաձայնությունը հստակորեն պետք է նշի այն ժամկետը և պայմանները, որի համաձայն ընդունվում կամ մերժվում է փոխանցումը: Եթե նշված չի պայմանագրում, ապա աշակերտը կրկին չպետք է դիմի միջկրթաշրջանային փոխանցման համար և արձանագրած կրթաշրջանի ուսումնական խորհուրդը աշակերտին պետք է թույլատրի, որ շարունակի հանախել իր արձանագրված դպրոցում: Միջկրթաշրջանային մերժված դիմումագրի դեմ բողոքը գրավոր պետք է հղել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակին: Եթե վերանայելուց հետո դիմումագիրը դարձյալ մերժվի, կարելի է դիմել Գերատեսչին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին և ապա վարչաշրջանի Ուսումնական խորհրդին:

C. **Ոչ Մագնետ Երկվեզվյան FLAG ծրագրի թույլտվություն՝ Դանգոն, Ջեֆերսոն, Մոնտե Վիստա, Մյուր, Ար. Դի. Վալթ և Վերդուգո Վուդլանդ դպրոցներում** - Գլենդելի հանրային տարրական դպրոցների FLAG ծրագրով հետաքրքրվող ընտանիքները պետք է լրացնեն FLAG դպրոցի դիմումագիրը և ընդունվելու դեպքում պահանջված բոլոր փաստաթղթերը պետք է հանձնեն դպրոցին: Գլենդելի քնակիչներից չի պահանջվում ներկրթաշրջանային թույլտվություն ստանալ՝ իրենց շրջանից դուրս FLAG ծրագրին մասնակցելու համար, սակայն կրթաշրջանից դուրս FLAG ծրագրին մասնակցելու դիմողներից պահանջվում է թույլտվության նամակ ստանալ իրենց կրթաշրջանից՝ արձանագրության պրոցեսը լրացնելու համար: Թույլտվության սույն նամակը, ինչպես նաև արձանագրության վավերացման նամակը և ներկրթաշրջանային դիմումագիրը պետք է հանձնել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակին: **FLAG ծրագրի շարունակությունը պայմանավորվում է աշակերտի կանոնավոր դպրոց հանախումների ու լավ վարձագծի արտացոլմամբ:** Սույն ակնկալիքների նկատմամբ թերանալը պատճառ կդառնա, որ աշակերտը վերադառնա իր շրջանի դպրոցը:

D. **Տարրական Մագնետ դպրոցներ (ներառյալ Մագնետ դպրոցների FLAG ծրագրեր) Էդիսոն, Ֆրանկլին և Քեֆլը դպրոցներում** - Գլենդելի հանրային տարրական դպրոցների Մագնետ ծրագրով հետաքրքրվող ընտանիքները պետք է լրացնեն Մագնետ դպրոցի դիմումագիրը և ընդունվելու դեպքում դպրոցին հանձնեն պահանջված բոլոր փաստաթղթերը: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտներից չի պահանջվում Մագնետ դպրոց հանախելու համար

ստանալ ներկրթաշրջանային թույլտվություն, այնուամենայնիվ, կրթաշրջանից դուրս դիմորդներից ակնկալվում է թույլտվության նամակ ներկայացնել իրենց կրթաշրջանից՝ արձանագրության պրոցեսը լրացնելու համար: Թույլտվության սույն նամակը, ինչպես նաև արձանագրության վավերացման նամակը և ներկրթաշրջանային դիմումագիրը պետք է հանձնել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակին: **Մագնետ ծրագրին մասնակցելու շարունակությունը պայմանավորվում է աշակերտի կանոնավոր դպրոց հաճախումների ու լավ վարքագծի արտացոլմամբ: Սույն ակնկալիքների նկատմամբ թերաճալը պատճառ կդառնա, որ աշակերտը վերադառնա իր շրջանի դպրոցը:**

E. **Անցումային մանկապարտեզ (TK)** – Քանի որ Գլենդեյլի հանրային կրթաշրջանի ոչ բոլոր դպրոցներն ունեն Անցումային մանկապարտեզի ծրագիր (TK), պայմանները լրացնող TK աշակերտները (5-ը լրացրած Սեպտեմբերի 2-ից մինչև Դեկտեմբերի 2-ը) կարձանագրվեն իրենց շրջանի ամենամոտիկ դպրոցում, որն ունի TK ծրագիր: Մանկապարտեզը սկսելու համար, հաջորդ տարին Անցումային մանկապարտեզի (TK) աշակերտը պետք է վերադառնա իր շրջանի դպրոցը:

F. **Ազատ արձանագրության ակտ – EC 48350 et seq.**
Երբ հանրային ուսուցման գերատեսչի հայեցողությամբ աշակերտը դպրոց է հանախում ազատ արձանագրության ցանկի հիման վրա (Open Enrollment List), աշակերտը կարող է կրթաշրջանի կամ կրթաշրջանից դուրս այլ դպրոց փոխադրվելու դիմում ներկայացնել, եթե իր ցանկացած դպրոցն ունենա ուսումնական ավելի բարձր նվաճումներ: Ավագ դպրոցի մարզիկ աշակերտների ծնողները պետք է ստուգեն CIP սպորտի ընդունելիության կանոնները, նախքան փոխանցման դիմում ներկայացնելը: Որևէ դպրոց փոխանցվելու դեպքում, փոխադրամիջոցը հանդիսանում է ծնողի պատասխանատվությունը: Կրթաշրջանները կարող են մշակել որոշակի գրավոր չափանիշեր՝ սույն դիմումագրերը ընդունելու կամ մերժելու համար, քանի որ աշակերտների ընտրությունը կատարվել է «Պատահական և անաչառ» պրոցեսով: Փոխանցման դիմումագրերը պետք է ներկայացվեն մինչև Հունվարի 1-ը, նախքան դպրոցական տարին սկսելը, բացառությամբ, երբ ուսումնական խորհուրդը չեղյալ համարի ժամկետը: Դիմելու համար, ծնողն ուղղակի պետք է կապվի այն կրթաշրջանի հետ, որտեղ ցանկանում է իր գավալիկն տեղափոխել: Open Enrollment List անվամբ թերթիկը կարող եմ ստանալ Կալիֆորնիայի Կրթության վարչաշրջանի <http://www.cde.ca.gov/sp/eo/op/> կայքէջով:

AB 1156 կրթական օրենքի համաձայն, այն աշակերտը, որը շրջանի դպրոցի կամ առաջարկվող դպրոցի անձնակազմի բացահայտությամբ, կոլագանության գոհ է դարձել իր շրջանի դպրոցի աշակերտի միջոցով, առաջնահերթություն կունենա ներկրթաշրջանային թույլտվություն ստանալ, առկա ներկրթաշրջանային որևէ պայմանագրի ներքո, կամ պայմանագիր չլինելու դեպքում, նկատի կառնվի ներկրթաշրջանային պայմանագիր մշակելու պարագա՝ աշակերտի օրինական խնամակալի խնդրանքով:

Դպրոց հանախման տարբերակների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, խնդրում ենք կապվել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի հետ (818) 241-3111 ներքին 283 հեռախոսահամարով:

ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի և համայնքի միջև փոխադարձ կապերը բարելավում են ուսումնական ծրագրերը և ընդլայնում են աշակերտի հաջողության հնարավորությունները: Ընտանիքը հանդիսանում է աշակերտի կրթության ամենակարևոր գործընկերը: Դպրոցի ու կրթաշրջանի ծրագրերում ընտանիքների ակտիվ մասնակցությունը դրական ազդեցություն է ունենում աշակերտի ձեռքբերումների վրա: Ծնողների կամ խնամակալների համար տրամադրելի են հնարավորություններ, որպեսզի արդյունավետ կերպով մասնակցի ինչն իրենց երեխաների կրթական կյանքում և դպրոցի ու կրթաշրջանի մակարդակներում կիսեն իրենց փորձառություններն ու մասնագիտությունները: Ծնողները կամ խնամակալները, առաջված նամակների, ինչպես նաև դպրոցի կայքի և կրթաշրջանի (www.gusd.net) կայքէջով տեղեկացվում են դպրոցական ծրագրերի մեջ ներգրավվելու հնարավորությունների մասին:

Ծնողները ֆաշալերվում են մասնակցի լինել իրենց երեխայի Դպրոցական խորհրդին (SSC) և կամ Անգլերեն լեզու սովորողների խորհրդատվական հանձնախմբին (ELAC): Դպրոցական խորհուրդը (SSC) խորհրդատվական այն մարմինն է, որը խորհուրդ է տալիս դպրոցի որոշակի ծրագրերի արդյունավետության մասին: ELAC-ը նաև հանդես է գալիս որպես խորհրդատվական մարմին, որը կենտրոնանում է Անգլերեն լեզու սովորողների ուսումնական հարցերի ու ծրագրերի վրա: Ծնողները կարող են մասնակցել նաև Կրթաշրջանի մասշտաբով Անգլերեն լեզու սովորողների հարցերով խորհրդատվական հանձնախմբին (DELAC):

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ (ELL) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլենդեյլի հանրային դպրոցների նպատակն է բոլոր աշակերտներին տրամադրել չափանիշային տեսակետից բարձրակ կրթություն: Անգլերեն լեզու սովորող մեր աշակերտների համար նախատեսված երկակի նպատակն է՝ արագորեն և արդյունավետորեն զարգացնել լեզվի հմտություն և համատարիք ու համադասարանցի անգլիախոս աշակերտների հետ ցուցաբերել ուսումնական առաջադիմություն: Անգլերեն լեզու սովորող մեր աշակերտներին տրամադրվում է դասարանային մակարդակի ուսուցում՝ անգլերեն լեզվի հմտություն զարգացնելու համար: Լեզուն տիրապետելու և գրագետ դառնալու համար անգլերեն լեզու սովորող բոլոր աշակերտներին տրամադրվում է Անգլերեն լեզվի զարգացման (ELD) ուսուցում:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 52104.1 հոդվածի համաձայն, մուտքի ֆնկցիոնալ է կատարվում բոլոր նոր արձանագրված աշակերտներից, ովքեր անգլերենից բացի խոսում են իրենց մայրենի լեզվով՝

Անգլերեն լեզվի հմտությունը որոշելու և համապատասխան ծրագրում նրանց տեղավորելու համար: Կարող է պահանջվել նաև մայրենի լեզվի *ֆինուքյուն*:

Նահանգի կողմից հաստատված California English Language Development Test (CELDT) անվամբ անգլերեն լեզվի *ֆինուքյուն*ը կատարվում է դպրոցում գրանցվելուց հետո, ինչպես նաև ամեն տարի տրվում է անգլերեն լեզու սովորող բոլոր աշակերտներին: Ծնողը կամ խնամակալը տեղեկացվում է *ֆինուքյուն* արդյունքների, լեզվի հմտության և ELD ծրագրի տեղավորման մակարդակի մասին: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը անգլերեն սովորողներին առաջարկում է հետևյալ ծրագրերը.-

- * **Structured English Immersion** - Այս ծրագիրն այն աշակերտների համար է, ովքեր բավարար չափով չեն տիրապետում անգլերենին: Ուսուցումը մեծ մասամբ կատարվում է անգլերեն լեզվով, սակայն ծրագիրը և ուսուցումը նախագծված է անգլերեն լեզու սովորող աշակերտների համար:
- * **English Language Academic Mainstream** - Այս ծրագիրն այն աշակերտների համար է, ովքեր համարյա տիրապետում են անգլերենին: Ուսուցումը ամբողջապես կատարվում է անգլերեն լեզվով:
- * **Այլընտրանքային ծրագիր (Երկլեզվյան Իմերժեն)** - Այլընտրանքային այս ծրագիրն անգլերեն սովորող այն աշակերտների համար է, ովքեր ունեն "Parental Exception Waiver" անվամբ իրավաբանական նամակը: Ուսումնական ծրագրի հիմնական առարկաները տրամադրվում են աշակերտի մայրենի լեզվով, ինչպես նաև Անգլերեն լեզվի զարգացման (ELD) համատեղ ուսուցմամբ:

Ծնողը կարող է կրթաշրջանի ծրագրերի մասին տեղեկություններ պահանջել իր երեխայի դպրոցից:

Հնարավորության սահմաններում, ծնողին և խնամակալին տրամադրվում է բանավոր ու գրավոր բարգամություններ, եթե նա անգլերենից բացի խոսում է այլ լեզվով:

ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐ

Կանոնավոր դպրոց հաճախելը կարևոր է երեխայի լիարժեք ներուժը դրսևորելու համար: Ուսումնական նոր տարին սկսելով, խրախուսում ենք որևէ ջանք չխնայել վստահանալու, որ ձեր գավակն **ԱՄԵՆ ՕՐ** կանոնավոր դպրոց հաճախի:

Կալիֆորնիայի կրթական կանոնների, Title V-ի, 421 հոդվածի և կրթական օրենսգրքի 48205 հոդվածի համաձայն, դպրոցի պաշտոնյայի կամ բժշկի հաստատմամբ, աշակերտը կարող է դպրոց չհաճախել՝ հիվանդության, կարանտինի, բժշկական ժամադրության (ներառյալ ստամոքսաղիքի և ակնաբուժի), ընտանիքի անմիջական անդամի հուղարկավորությանը մասնակցելու կամ որպես ժյուրի/ատենակալ ծառայելու համար:

Երբ աշակերտի ծնողը կամ խնամակալը նախօրոք խնդրագիր է ներկայացնում և դա հաստատվում է տնօրենի կամ արտոնյալ պաշտոնյայի կողմից, աշակերտը կարող է քացակալել նաև անձնական թույլատրելի պատճառներով, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված՝ դատարան ներկայանալու, որևէ տոնի կամ կրոնական արարողության մասնակցելու, կրոնական առանձնարանների մասնակցելու, աշխատանքային համաժողովի կամ հարցազրույցի ներկայանալու համար: Կրոնական առանձնարաններին մասնակցելը յուրաքանչյուր կիսամյակում չպետք է չորս ժամից ավելի լինի:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի հոդված 48980(յ) հոդվածի համաձայն, վերոհիշյալ պատճառներով աշակերտի քացակալությունները չպետք է ազդեն նրա գնահատականների վրա կամ աշակերտը չպետք է ֆրեդիք կորցնի և պետք է թույլատրել նրան, որ լրացնի այն առաջադրանքները և *ֆինուքյուն*ները, որոնք հարգելի քացակալության պատճառով բաց է թողել, և դրանք լրացնելով պետք է լրիվ ֆրեդիք ստանա: Դասարանի ուսուցիչը, որի դասից աշակերտը հարգելի պատճառով քացակալել է, պետք է որոշի թե աշակերտը որ դասաժամին և ինչ առաջադրանք պետք է լրացնի: Փնուքյունները և առաջադրանքները պետք է աշակերտի քաց թողած *ֆինուքյուն*ներին և առաջադրանքներին համագործակցելով, բայց ոչ անպայման մույնը լինեն:

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 48260 հոդվածի համաձայն, որևէ աշակերտ, որ նեթակա է ամբողջօրյա պարտադիր կրթության կամ continuation պարտադիր կրթության, և մեկ ուստարվա ընթացքում առանց հարգելի պատճառի երեք ամբողջ օր քացակալի դպրոցից կամ մեկ ուստարվա ընթացքում երեք անգամ առանց ընդունելի պատճառի 30-րոպեից ավելի ուշանա և կամ քացակալի դասարանից, համարվում է փախուստ և պետք է գեկուցվի հաճախումների դիրեկտորին կամ կրթաշրջանի գերատեսչին:

Հարգելի քացակալություններ – EC 48205

- a) Չնայած 48200 հոդվածի, աշակերտի քացակալությունը պետք է հարգելի համարել, եթե՝
 1. Հիվանդության պատճառով է:
 2. Կարանտինի պատճառով է՝ վարչաշրջանի կամ ֆալսապետարանի առողջապահական պաշտոնյայի կարգադրությամբ:
 3. Բժշկական, ստամոքսաղիքային, ակնաբուժական կամ ֆայրոպրակտիկ ծառայություններ ստանալու պատճառով է:
 4. Անմիջական ընտանիքի անդամներից մեկի թաղման արարողության պատճառով է, այնքան ժամանակ, որ քացակալությունը մեկ օրից ավելի չէ, եթե Կալիֆորնիայում է և երեք օրից ավելի չէ, եթե Կալիֆորնիայից դուրս է:
 5. Ժյուրի ընտրվելու պատճառով է, օրենքի համաձայն:

6. Ուսանող ծնողի երեխայի հիվանդության կամ բժշկական ժամադրությունների պատճառով է՝ դպրոցական ժամերի ընթացքում:
7. Անձնական հարգելի պատճառով է, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված՝ դատարան ներկայանալու, թաղման արարողության մասնակցելու, կրոնական արարողությունների մասնակցելու, աշխատանքային ժողովների կամ օրենսդրական կամ դատական գործընթացի կրթադաստիարակչական ժողովների մասնակցելու համար, որոնք առաջարկվել են ոչ եկամտարեք կազմակերպությունների կողմից, երբ աշակերտի քացակալությունը գրավոր պահանջել է ծնողը կամ խնամակալը և հաստատվել է տնօրենի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից:
8. Ընտրատարածքում, որպես անդամ, ընտրաընթացի աշխատանքներին ծառայելու պատճառով է, ընտրական օրենսգրքի բաժին 12302-ի համաձայն:
9. Աշակերտի անմիջական ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու պատճառով է, որը գինձառայության անդամ է, ինչպես սահմանվել է ուսումնական օրենսգրքի հոդված 49701-ի համաձայն՝ կանչվել է հերթապահության, արձակուրդում է կամ անմիջապես վերադարձել է, տեղակալվել է մարտական գոտու կամ մարտական պաշտոնի համար: Այս պարբերության համապատասխան քացակալությունները պետք է հարգելի համարել այն ժամանակամիջոցի համար, որը կսահմանվի կրթաընթացի գերատեսչի հայեցողությամբ:
 - b) Համաձայն այս բաժնի, քացակա աշակերտին պետք է թույլատրել, որ լրացնի քացակալության ընթացքի բոլոր առաջարկներն ու ֆննդությունները և բավարար չափով աշխատանք կատարելուց հետո նրան լրիվ ֆրեզիք տալ: Դասարանի ուսուցիչը, որի դասից քացակալել է աշակերտը, պետք է որոշի, թե համարժեք ո՞ր ֆննդությունը պետք է հանձնի աշակերտը՝ քացակալությունից վերադառնալուց հետո:
 - c) Այս բաժնի կետերի համաձայն, կրոնական արարողություններին մասնակցելը չպետք է յուրաքանչյուր կիսամյակում չորս ժամից ավելի լինի:
 - d) Մույն բաժնի համաձայն քացակալությունները համարվում են դասարանի օրական ներկայությամբ մաս կազմող քացակալություններ և չեն կարող ստանալ նահանգի կողմից նշանակած վնասումները:
 - e) Այս բաժնում օգտագործված «անմիջական ընտանիք» արտահայտությունն ունի նույն նշանակությունը, ինչպես սահմանվել է 45194 հոդվածում, քացառությամբ, որ այնտեղ նշվածը վերաբերում է «պաշտոնյային», իսկ այստեղ «աշակերտին»:

ԱՇԱԿԵՐՏԻ ՎԱՐՔԱԳԻԾ

Արդյունավետ ուսումնառությունը տեղի է ունենում ապահով, անվտանգ ու խաղաղ ուսումնական միջավայրում: Դպրոցի միջավայրում չի հանդուրժվի բռնություն, գեներ, նախապաշարմունք կամ չարաշահում: Աշակերտը պատասխանատու է իր վարքագծի համար: Խնդրում ենք ծանոթանալ դպրոցի կանոններին: Այստեղ, դուք կգտնեք աշակերտի վարքագծի մասին Կալիֆորնիա նահանգի և Գլենդելի հանրային դպրոցների ֆաղափականությունն ու կանոնակարգերը:

Աշակերտին պատասխանատու համարելու պարտականություն՝ (Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 44807 հոդված)- Յուրաքանչյուր ուսուցիչ կամ ղեկավար, աշակերտին խիստ պատասխանատու պետք է համարի իր կատարած վարքի համար՝ դպրոցում, դպրոցի նախապահին, մաշի ժամանակ, դպրոցից դուրս և դպրոցի կողմից հովանավորված միջոցառումների կամ երթևեկության ընթացքում: Վարքագծային կանոնները տրամադրվում են ծնողներին՝ Գլենդելի բոլոր դպրոցներում: (Իրավական ֆաղվածքներ՝ Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 48900, 48900.2, 48900.3, 48900.4, 48900.7 հոդվածներ):

Ղեկավարությունը կարող է համապատասխան ֆայլերի դիմել (կախակալում կամ հեռացում), երբ ստացված տեղեկությունները ցույց տան, որ դպրոցից հետո կամ դպրոցական աշխատանքներից հետո առաջացած աշակերտի անվայել վարքը վնասաբեր և ուղղակի ազդեցություն է ունեցել կամ լուրջ վտանգ է սպառնացել կրթաընթացի կարգապահական համակարգի, կրթադաստիարակչական միջավայրի, աշակերտների, անձնակազմի և/կամ տնօրենության անվտանգությանը կամ ընդհանուր քարոքությանը:

Աշակերտի պատասխանատվություններ՝ Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 48908 հոդված և 5 CCR, 300 հոդված - Յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է, որ ժամանակին և կանոնավոր դպրոց հանախի, հնազանդի դպրոցի կանոններին, հետևի իր ուսուցչի և մյուս պաշտոնյաների բոլոր ուղղություններին, աշխատանք լինի, հարգի իր ուսուցիչներին և մյուս պաշտոնյաներին, բարի և ֆաղափավարի լինի իր դասընկերների նկատմամբ և խուսափի անպարկեշտ խոսակցությունների:

Աշակերտների խուզարկում (Կրթաընթացի ուսումնական խորհրդի ֆաղափականություն 5145.12)- Դպրոցի պաշտոնյաները կարող են աշակերտներին, ինչպես նաև նրանց ունեցվածքը՝ ներառյալ մեքենաները խուզարկել, երբ օրենքով թույլատրվում է կամ երբ խուզարկումը կարող է փաստեր քացահայտել, որ աշակերտը խախտել է օրենքը կամ կրթաընթացի և դպրոցի կանոնները:

Սա ներառում է բջջային հեռախոսների տեղեկությունների, հեռախոսային հաղորդագրումների ու նկարների խուզարկում: Չի թույլատրվում Սայեր բուլիինգ և Սայեր սեռական ոտնձգություն: Ծնողները իրազեկ պետք է լինեն իրենց երեխաների բջջային հեռախոսների նկարների և հաղորդագրումների մասին, որոնք կարող են խախտել օրենքը և այդ ուղղությամբ միջոցներ ձեռք առնել կանխելու օրինախախտումը:

Հատուկ շնորհի կամ մետաղյա դիտելոտորների օգնությամբ կարելի է պատահական խուզարկել դասարանները և աշակերտների դարակները՝ մասնաձեռքությամբ կանխելու համար:

Ջեներ (Կրթաընթացի ուսումնական խորհրդի կանոններ 5131.7)- Կալիֆորնիայի նահանգը և Գլենդելի հանրային դպրոցների կրթաընթացը համոզված են, որ հույժ կարևոր է ապահովել ուսումնական անվտանգ

միջավայր: Հրագն, դանակ, պայթուցիկ կամ այլ վտանգավոր առարկաներ, ներառյալ pepper spray, արցունքաբեր գազ և laser pointer ունենալը հակաօրինական է:

Էլեկտրոնային սարք ունենալը և օգտագործելը (Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի հատված 48901.5) և (Գլենդելի հանրային դպրոցների Ուսումնական խորհրդի ֆաղափականություն 5131)

Աշակերտները թույլատրվում են դպրոցական օրվա ընթացքում կամ դպրոցի կողմից հովանավորված որևէ միջոցառման ընթացքում իրենց հետ ունենալ բջջային հեռախոս կամ էլեկտրոնային ազդանշաններով որևէ սարք, ինչպես օրինակ՝ mobil phone, smart phone, laptop computer, table device կամ հաղորդակցության որևէ սարք: Էլեկտրոնային ազդանշաններով սարքերը կարելի է, արտակարգ իրավիճակներում, դպրոցի տնօրենի հայեցողությամբ կամ առողջական նպատակով օգտագործել (օրինակ՝ փականքի, երկրաշարժի կամ այլ պարագաներ):

Դասի ընթացքում կամ դպրոցական ծրագրերի ընթացքում էլեկտրոնային ազդանշաններով սարքերի անպատշաճ օգտագործումը նկատի կառնվի որպես դպրոցի աշխատանքների խանգարում և աշակերտը կենթարկվի կարգապահական միջոցառումների: Դպրոցի պաշտոնյաները կարող են դպրոցի տնօրինության հրահանգով բռնագրավել էլեկտրոնային ազդանշաններով որևէ սարք: Օրվա վերջում բռնագրված սարքը հանձնվելու է աշակերտի ծնողին կամ խնամակալին: Ուսումնական խորհուրդը պատասխանատվություն չի ստանձնում նման սարքերի վնասվելու, կորելու կամ գողացվելու համար:

Կովազանության ընթացակարգեր (Գլենդելի կրթաշրջանի Ուսումնական խորհրդի 5131 ֆաղափականություն):

Աշակերտները խրախուսվում են տեղեկացնել իրենց դպրոցի անձնակազմին, եթե նրանց նկատմամբ կովազանություն է տեղի ունեցել կամ եթե կասկածում են, որ ուրիշ աշակերտ գոհ է դարձել այդպիսի մի արարքի: Ավելացնենք նաև, որ գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը միջոցներ պետք է կիրառի, որպեսզի աշակերտները կարողանան սպառնալիքները կամ միջադեպերը գաղտնի ու անանուն գեկուցել: Դպրոցի անձնակազմը, ովքեր վկա են լինում կովազանության, անմիջապես պետք է միջամտեն կանխելու միջադեպը, երբ դա անվտանգ է անել: (Կրթական օրենսգրքի 234.1): Աշակերտները կարող են ուսուցչին կամ դեկանին քանակոր կամ գրավոր գանգատվել՝ իրենց կարծիքով որևէ կովազանության միջադեպի մասին: Կովազանության գանգատները պետք է ուսումնասիրվեն և բողոքարկվեն ընթացակարգերի համաձայն լուծում գտնեն:

Դպրոցից կախկալվելու և հեռացվելու օրենսգրքի (Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի հատված 48900)

Աշակերտը չպետք է կախկալվի կամ հանձնարարվի դպրոցից հեռացվելու, եթե գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը, որ արձանագրված է աշակերտը, չհաստատեն, որ աշակերտը կատարել է (ա)-ից մինչև (բ) ենթարաժմներում բնութագրված արարքներից մեկը կամ ավելին՝

- (a) (1) Պատճառել, փորձել պատճառել, կամ սպառնալ մարմնապես վնասվածք պատճառելու մի այլ անձի: (2) Կանխամտածված ուժ կամ բրտություն ցուցաբերել այլ անձի նկատմամբ, ի բացառյալ ինքնապաշտպանության պարագայից:
- (b) Ունենալ, վաճառել, կամ այլ խոսքով հայթայթել որևէ տեսակի հրագն, դանակ, պայթուցիկ, կամ ուրիշ վտանգավոր առարկա, ի բացառյալ, երբ այդպիսի առարկաներ ունենալու համար աշակերտը գրավոր թույլտվություն ստացած լինի դպրոցի արտոնյալ պաշտոնյայից, որի հետ համաձայն է տնօրենը կամ նրա տեղակալը:
- (c) Ապօրինի կերպով ունենալ, գործածել, վաճառել կամ այլ խոսքով հայթայթել կամ լինել որևէ տեսակի արգելված նյութի՝ ալկոհոլ պարունակող կամ ոգելից խմիչքի ազդեցության տակ, որոնք ցանկագրված են Առողջապահության ու ապահովության օրենսդրության 2-րդ գլխի 10-րդ բաժնի ներքո (սկսյալ թիվ 11053 հոդվածից):
- (d) Ապօրինի կերպով առաջարկել, կարգադրել կամ բանակցել վաճառելու որևէ տեսակի արգելված նյութ՝ ալկոհոլ պարունակող կամ որևէ տեսակի ոգելից խմիչք, որոնք ցանկագրված են Առողջապահության ու ապահովության օրենսդրության 10-րդ բաժնի 2-րդ գլխի ներքո (սկսյալ թիվ 11053 հոդվածից), և ապա վաճառել, հանձնել կամ այլ խոսքով ուրիշի համար հայթայթել մի այլ տեսակի հեղուկ, նյութ կամ առարկա և այն հեղուկը, նյութը կամ առարկան ներկայացնել, որպես արգելված նյութ, ալկոհոլ պարունակող խմիչք կամ թմրադեղ:
- (e) Գողանալ կամ փորձել գողանալ կամ բռնի կորզել:
- (f) Վնասել կամ փորձել վնասել դպրոցի գույքը կամ անձնական սեփականությունը:
- (g) Գողանալ կամ փորձել գողանալ դպրոցի գույքը կամ անձնական սեփականությունը:
- (h) Ունենալ կամ օգտագործել ծխախոտ կամ որևէ արտադրություն, որը պարունակում է ծխախոտ կամ նիկոտին, ներառյալ բայց ոչ սահմանափակված, cigarettes, cigars, miniature cigars, clove cigarettes, smokeless tobacco, snuff, chew packets և betel: Այդուհանդերձ, այս բաժնին աշակերտին չի արգելում անձնական դեղատոմսով արտադրություններ ունենալը կամ օգտագործելը:
- (i) Անվայել վարք ցուցաբերել կամ գոհեցնել վարք ցուցաբերելը սովորություն ունենալ:
- (j) Ապօրինի կերպով ունենալ, առաջարկել, կարգադրել կամ բանակցել վաճառելու թմրադեղ օգտագործելու որևէ տեսակի գործիք, որը բնութագրված է Առողջապահության և անվտանգության օրենսդրության թիվ 11014.5 հոդվածում:
- (k) (1) Խանգարել դպրոցի աշխատանքները կամ այլ խոսքով դիտավորյալ արհամարհել դպրոցի վարիչների, ուսուցիչների, դեկանների, պաշտոնյաների կամ անձնակազմի հեղինակությունը, երբ նրանք կատարում են իրենց պարտականությունները:
(2) Բացառությամբ նախատեսված 48910 հոդվածի, մանկապարտեզի կամ 1-ից 3-րդ դասարանների աշակերտը չպետք է կախկալվի դպրոցից այս ստորաբաժնում թվարկված արարքների համար և այս ստորաբաժնից հիմք չպետք է ծառայի մանկապարտեզի կամ 1-ից 12-րդ դասարանների որևէ աշակերտի կախկալման հանձնարարության համար: Հուլիս 1, 2018 թվականին, այս պարբերությունը կորցնում է իր

օրինական ուժը, քացառությամբ այն պարագայից, որ հետագայում ընդունված կանոնն ուժի մեջ դրվի նախքան Հունիս 1, 2018 թվականը, ջնջվի կամ հետաձգվի այդ ժամկետը:

- (l) Գիտակցաբար ընդունել դպրոցից կամ որևէ մեկից գողացված գույք:
- (m) Ունենալ գեներալ նմանակ: Այս բաժնում օգտագործված «գեներալ նմանակ»-ը նշանակում է՝ որևէ գեներալ ընդօրինակություն, որը հիմնականում նմանվում է որևէ գեներալ ֆիզիկական հատկանիշերին, և ողջամիտ անհատը կարող է ենթադրել, որ ընդօրինակված գեներալ իրական գեներալ է:
- (n) Կատարել կամ փորձել կատարել սեռական ոտնձգություն ինչպես բնութագրված է Քրեական օրենսդրության թիվ 261, 266c, 286, 288, 288a կամ 289 հոդվածներում կամ սեռական խոշտանգում, ինչպես բնութագրված է Քրեական օրենսդրության թիվ 243.4 հոդվածում:
- (o) Անհանգստացնել, սպառնալ կամ ահաբեկել այն աշակերտին, որ գանգատողի վկա է կամ դպրոցի կարգապահական դատավարության վկա է, նպատակ ունենալով՝ խանգարել այդ աշակերտի վկայությունը կամ վրեժխնդիր լինել կամ երկուսն էլ:
- (p) Ապօրինի կերպով առաջարկել, կարգադրել կամ բանակցել վաճառելու կամ վաճառել դեղատոմսով գնված Soma դեղ:
- (q) Ներգրավվել կամ փորձել ներգրավվելու «քրտության ապացույցին»: Այս ենթաբաժնում «քրտության ապացույց» նշանակում է աշակերտական կազմակերպության կամ կազմի մեջ ընդունվելու մեթոդ, (ուսումնական հաստատության կողմից պաշտոնապես նախատեսված կամ ոչ), որը հավանաբար կարող է մարմնային լուրջ վնասվածքի կամ անձնական ստորագրման կամ անպատվության պատճառ դառնալ՝ նախկին, ներկայի կամ ապագա աշակերտին մարմնապես կամ հոգեպես վնաս պատճառելով: Այս ենթաբաժնում արժարձված «քրտության ապացույց» չի վերաբերում սպորտի կամ դպրոցական հավաքների միջոցառումներին:
- (r) Ներգրավվել կոլվագանության (bullying) մեջ, այս ենթաբաժնում հետևյալ տերմինները ունեն հետևյալ նշանակությունները--
 1. "Bullying" նշանակում է ֆիզիկական կամ բանավոր որևէ կոպիտ արարք, ներառյալ գրավոր կամ էլեկտրոնային սարքերով հաղորդակցություն և այդ թվում մեկ կամ ավելի արարքներ մի աշակերտի կամ մի խումբ աշակերտների կողմից, ինչպես սահմանվել է 48900.2, 48900.3 կամ 48900.4 բաժիններում, ուղղված մեկ կամ մի քանի աշակերտների, որոնք ունեն կամ ողջամտորեն կարելի է նախատեսել, որ ունեն հետևյալ մեկ կամ մի քանի հետևանքները՝
 - A. Ողջամիտ աշակերտի կամ աշակերտների անձին և նրանց անձնական գույքերին վնաս հասցնելու վախի մեջ պահել:
 - B. Զգալիորեն քացասական ազդեցություն ունենալ ողջամիտ աշակերտի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:
 - C. Զգալիորեն խանգարել ողջամիտ աշակերտի ուսումնական կատարումները:
 - D. Ողջամիտ աշակերտին զգալիորեն խանգարել դրսևորելու իր ունակությունները, որպեսզի չկարողանա մասնակցել կամ օգտվել դպրոցի կողմից կազմակերպված ծառայություններից, արտոնություններից և միջոցառումներից:
 2. (A) «Էլեկտրոնային ակտ» նշանակում է հաղորդակցության փոխանցում, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված հեռախոսով կամ առանց լարի հեռախոսով կամ առանց լարի սարքերով, համակարգչով կամ փեյերով, կամ սոցիալական ցանցի կալի հայտարարություններով, էլեկտրոնային սարքի միջոցով, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված հետևյալներով՝
 - i. Հաղորդագրություն, տեքստ, ձայն կամ պատկեր:
 - ii. Սոցիալական ցանցում հայտարարություն, ներառյալ, սակայն ոչ սահմանափակված հետևյալներով՝
 - I. Գրել burn page-ում կամ ստեղծել burn page: "Burn page" նշանակում է Ինտերնետային ցանց, որը կազմվել է թիվ 1 պարբերության մեջ ցանկագրված մեկ կամ ավելի նպատակի համար:
 - II. Աշակերտին ծաղրել՝ թիվ 1 պարբերության մեջ ցանկագրված մեկ կամ ավելի նպատակի համար: "Credible impersonation" նշանակում է գիտակցաբար և առանց համաձայնության աշակերտին ծաղրել՝ նրան վախեցնելու նպատակով և այնպես որ ուրիշ աշակերտ համոզված լինի, որ նա ծաղրում է այդ աշակերտին:
 - III. Ստեղծել կեղծ պրոֆայլ՝ թիվ 1 պարբերության մեջ ցանկագրված մեկ կամ ավելի նպատակի համար: "False profile" նշանակում է կեղծ կամ շինծու աշակերտի պրոֆայլը կամ աշակերտի պրոֆայլի նմանությունը, ոչ այն աշակերտը, որ ստեղծել է կեղծ պրոֆայլը:
 - (B) Notwithstanding paragraph (1) և subparagraph (A), էլեկտրոնային ակտ չպետք է համարվի լոկ դրա հիման վրա, որ դա փոխանցվել է ինտերնետի մեջ կամ ներկայումս փակցվել է ինտերնետում:
3. "Reasonable pupil" նշանակում է մի աշակերտ, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված, քացառիկ կարիքներով մի աշակերտ, որը ցուցաբերում է միջին չափի խնամք, հմտություն և դատողություն՝ իր համատարիֆի աշակերտի կամ քացառիկ կարիքներով համատարիֆ աշակերտի հետ շփվելու համար:
- (s) Աշակերտը չպետք է կախակալվի կամ դպրոցից հեռացվի այս բաժնում թվարկված որևէ արարքի համար, ի քացառյալ այն պարագայից, երբ այդ արարքը վերաբերում է դպրոցական աշխատանքներին կամ միջոցառումներին, որոնք կատարվել են գերատեսչի կամ տնօրենի կամ այլ կրթաշրջանի իրավասության տակ գտնվող դպրոցում: Աշակերտը կարող է կախակալվել կամ դպրոցից հեռացվել այս բաժնում թվարկված որևէ արարքի համար, որոնք վերաբերում են դպրոցական աշխատանքներին կամ դպրոցական միջոցառումներին կամ դպրոցական հանախումներին, որոնք տեղի են ունեցել որևէ ժամանակ ներառյալ սակայն ոչ սահմանափակված հետևյալներով՝
 1. Դպրոցում եղած ժամանակ:
 2. Դպրոց գնալիս կամ վերադառնալիս:
 3. Հաշտամի ընթացքում՝ դպրոցում կամ դպրոցից դուրս:

4. Գպրոցի հովանավորությամբ կազմակերպված միջոցառումների ընթացքում, այնտեղ զնալիս կամ վերադառնալիս:

- (f) Քրեական օրենսգրքում սահմանված թիվ 31 հոդվածի համաձայն, այն աշակերտը, որ աշակցել կամ դրդել է ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու կամ փորձել է մարմնական վնասվածք պատճառել, կարող է կախակալվել, բայց չհեռացվել, ի բացառյալ այն պարագայից, երբ աշակերտը պատանիների դատարանի կողմից դատապարտվի, որպես հանցագործությանն աշակցող կամ դրդող, որի հետևանքով սուժած անձը մարմնական խիստ վնասվածք է ստացել կամ մարմնական վնասվածքը համապատասխանել է (a) ենթարածի կարգապահական կանոնների պահանջին:
- (u) Այս բաժնում «դպրոցական գույք»-ը ներառում է, սակայն չի սահմանափակվում օգտագործված էլեկտրոնային բարտով ու նյութերով:
- (v) Գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը կարող է իր հայեցողությամբ պատժի ենթակա աշակերտին կախակալման կամ հեռացման այլընտրանք տալ, որոնք համապատասխանում են նրա տարիքին և նախագծվել են աշակերտի վարքն ուղղելու համար, ինչպես նշվել է 48900.5 հոդվածում:
- (w) Օրենսդրության մտադրությունն է կախակալման կամ հեռացման այլընտրանքներ կիրառել այն աշակերտի համար, որը դասից փախչում, ուշանում կամ այլ խոսքով բացակայում է դպրոցական միջոցառումներից:

Կալիֆոռնիայի օրենսգրքի, հոդված 48900.2

Ի հավելումն թիվ 48900 հոդվածում սահմանված պատճառների, աշակերտը կարող է դպրոցից կախակալվել կամ հանձնարարվել դպրոցից հեռացվելու, եթե գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը, ուր արձանագրված է աշակերտը հաստատի, որ աշակերտը կատարել է սեռական ոտնձգություն այնպես ինչպես բնութագրվել է թիվ 212.5 հոդվածում:

Սույն գլխի նպատակին առնթեր, թիվ 212.5 հոդվածում սահմանված վարքը, տուժված անձի սեռին պատկանող ողջամիտ անձի կողմից բավականաչափ խիստ պետք է համարվի, որը բացասական ազդեցություն է ունեցել անհատի ուսումնական կատարումների վրա կամ ստեղծել է ահաբեկչական, բշտամական կամ անարգական միջավայր: Այս բաժինը չի կիրառվի մանկապարտեզի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար:

Կալիֆոռնիայի օրենսգրքի, հոդված 48900.3

Ի հավելումն թիվ 48900 և 48900.2 հոդվածներում սահմանված պատճառների, 4-րդից 12-րդ դասարանների որևէ աշակերտ կարող է կախակալվել կամ հանձնարարվել դպրոցից հեռացվելու, եթե գերատեսուչը կամ այն դպրոցի տնօրենը ուր արձանագրված է աշակերտը հաստատի, որ աշակերտը պատճառել, փորձել է պատճառել, սպառնացել կամ մասնակցել է ստեղծելու հիմունքով քրոսության, ինչպես բնութագրվել է 233 հոդվածի (c) ենթարածում:

Կալիֆոռնիայի օրենսգրքի, հոդված 48900.4

Ի հավելումն թիվ 48900 և 48900.2 հոդվածներում սահմանված պատճառների, 4-րդից 12-րդ դասարանների որևէ աշակերտ կարող է կախակալվել կամ հանձնարարվել դպրոցից հեռացվելու, եթե գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը, ուր արձանագրված է աշակերտը, հաստատի, որ աշակերտը կանխամտածված բշտամական և ահաբեկչական միջավայր է ստեղծել մասնակցելով դպրոցի անձնակազմի կամ աշակերտների դեմ ուղղված ոտնձգության, սպառնալիքի կամ ահաբեկման գործին, որն այնքան խիստ ու ազդու է եղել, որն իրապես և փաստորեն խանգարել է դասարանային աշխատանքները՝ անկարգություն ստեղծելով և անձնակազմի կամ աշակերտների իրավունքները ոտնահարելով:

Կալիֆոռնիայի օրենսգրքի, հոդված 48900.7

- a) 48900, 48900.2, 48900.3 և 48900.4 հոդվածներում սահմանված պատճառներից բացի, որևէ աշակերտ կարող է կախակալվել կամ հանձնարարվել դպրոցից հեռացվելու, եթե գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը ուր արձանագրված է աշակերտը հաստատի, որ աշակերտն ահաբեկչական սպառնալիք է կատարել դպրոցի պաշտոնյաների կամ դպրոցի գույքի կամ երկուսի դեմ:
- b) Այս հոդվածի նպատակին առնթեր, «ահաբեկչական սպառնալիքը պետք է ներառի որևէ հայտարարություն, գրավոր կամ բանավոր, մի անձի կողմից, որը կանխամտածված կերպով սպառնում է ռեժիմ գործել, որը կհանգեցնի մահվան, մի այլ անհատի մարմնական մեծ վնասվածքի կամ հազար (1,000) դոլարից ավելի գույքի վնասի և դա կկատարվի հատուկ մտադրությամբ, այնպես որ հայտարարությունը կընդունվի իրրև սպառնալիք, նույնիսկ եթե իրականում այդ մտադրությունն իրագործելու նպատակ չի եղել, բայց ըստ երևույթի և հանգամանքների, որի հիմամբ ստեղծվել է դա, այնքան պարզ, անվիճելի, անհետաձգելի և որոշակի է, որ սպառնալիքի ենթակա անհատին հաղորդում է նպատակի կրեռությունը և սպառնալիքի իրագործման անմիջական հետևանքը, և հետևաբար պատճառ է դառնում, որ այդ անհատն անվերջ սարսափի մեջ լինի իր կամ իր անմիջական ընտանիքի անվտանգության, կամ կրթաշրջանի գույքի կամ սպառնալիքի ենթակա անհատի անձնական գույքի կամ նրա անմիջական ընտանիքի անվտանգության համար:

Կալիֆոռնիայի օրենսգրքի, հոդված 48900.5

- a) 48922.2 հոդվածում բնութագրված՝ կախակալումը, այդ թվում՝ վերահսկված կախակալումը, պետք է գործադրվի այն դեպքում միայն, երբ ձախողեն աշակերտի վարքն ուղղելու բոլոր այլ միջոցները: Կրթաշրջանը հավանաբար աշակերտի արխիվում գրանցի աշակերտի վարքի ուղղման համար օգտագործված ապացույցները, որոնք կարող են օգտագործվել հոդված 49069-ի համաձայն: Այնուամենայնիվ, աշակերտը, ներառյալ բացառիկ կարիքներով աշակերտը, ինչպես նշվել է 56026 հոդվածում, կարող է կախակալվել, համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսգրքի 1415

բաժնի խորագիր 20-ի, 48900 հոդվածում թվարկված առաջին կարգազանցության համար, եթե դպրոցի տնօրենը կամ դպրոցների գերատեսուչը որոշի, թե աշակերտը խախտել է սույն 48900 հոդվածի (a), (b), (c), (d), կամ (e) ենթարաժիմները կամ եթե աշակերտի ներկայությունը վտանգ է սպառնացել ուրիշներին:

- b) վարձագծի ուղղման այլ միջոցները ներառում սակայն չեն սահմանափակվում հետևյալներով՝
- 1) Հանդիպում՝ դպրոցի անձնակազմի և աշակերտի ու նրա ծնողների հետ:
 - 2) Խորհրդատվության հանձնարարություն՝ դպրոցի խորհրդատուի, հոգեբանի, սոցիալական ծառայություն մատակարարողի, նրեխալի քարեկեցության հարցով պաշտոնյայի կամ Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի անձնակազմի հետ:
 - 3) Աշակերտին ուսումնասիրող խմբեր, ղեկավարության խմբեր, ռեսուրսների խմբեր կամ միջամտման այլ խմբեր, որոնք բնութագրում են վարձագիծը և մշակում ու գործադրում են անհատականացված ծրագրի՝ աշակերտի ու ծնողի համագործակցությամբ վարձագիծն ուղղելու համար:
 - 4) Հոգեբանական կամ հոգեկրթական համապարփակ գնահատման հանձնարարություն՝ այդ թվում անհատականացված հատուկ ծրագրի առաջարկ՝ դաշնային կառավարության օրենքի համաձայն Section 504 of the federal Rehabilitation Act of 1973 (29 U.S.C. Sec. 794(a):
 - 5) Ընդգրկվածություն՝ վարձագծի ուղղման կամ գալույթի գալման դաստիարակչական ծրագրում:
 - 6) Մասնակցություն՝ վերականգնողական արդարադատության ծրագրում:
 - 7) Դպրոցական օրվա ընթացքում միջամտման ծրագրերով դրական վարձագծի աջակցության մոտեցում:
 - 8) Արտադասարանային ծրագրեր, որոնք անդրադառնում են վարձագծային որոշակի խնդիրներին կամ քացահայտում են աշակերտի դրական աշխատանքներն ու վարձագիծը, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված այն ծրագրերով, որոնք համատեղ աշխատում են ծնողի ու տեղական համայնքային խմբերի հետ:
 - 9) 48900.6 հատվածում բնութագրված այլընտրանքները որևէ մեկը:

ԴՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (PBIS)

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը նպաստում ու աջակցում է դրական վարձագծի զարգացմանը, որպես այլընտրանք աշակերտին դպրոցից կախակալելու: Դրական վարձագծի միջամտությունն ու աջակցությունը կենտրոնանում է դպրոցի տարածքում ու դասարանում ստրատեգիաներ օգտագործելու վրա, որպեսզի օգնի աշակերտին սովորել ու կիրառել այնպիսի վարձագիծ, որն աջակցում է հարգալից, պատասխանատու և ապահով դպրոցի միջավայր կերտելուն:

ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիա օրենքի համաձայն (Ընտանեկան օրենսգրքի 3010 հոդված), յուրաքանչյուր ծնող իր երեխայի հավասար խնամակալության իրավունքն ունի: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ֆադաբանությունն է հնազանդվել ընտանեկան օրենսգրքի 3010 հոդվածին, որպեսզի ծնողից որևէ մեկը, համապատասխան ինֆորմացիայի փաստաթուղթ ներկայացնելով, կարողանա իր երեխային դպրոցից վերցնել, կամ նրա առողջության, կրթության և քարեկեցության մասին որոշում կայացնել:

Ընտանեկան օրենսգրքի 3025 հոդվածի համաձայն ոչ խնամարկու ծնողը պետք է ունենա երեխայի անձնական գործը ստուգելու հնարավորություն: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է երկու ծնողին էլ թույլատրի, որ հնարավորություն ունենան իրենց երեխայի դպրոցական արձանագրություններին, այդ թվում՝ դպրոցի տիրապետման տակ եղած բժշկական արձանագրություններին:

Եթե դատարանի կարգադրությամբ սահմանափակվել է երեխայի այցելության կամ խնամակալության կամ երեխայի մասին տեղեկություններ ստանալու ծնողի իրավունքը, դա պետք է լինի երկու կողմի ծնողի պարտականությունը, որ դպրոցին տրամադրի դատավորի ստորագրությամբ դատարանի կնքված հրամանը: Դատարանի հրամանի պատենները կարելի է ձեռք բերել դատարանի գրասենյակից, որտեղ կատարվել է կարգադրությունը:

Մեկ ծնողի բանավոր կամ գրավոր հայտարարությունը, առանց դատարանի կողմից ստորագրված հրամանի, բավարար պատճառ չի լինի, որ դպրոցը մերժի երեխային մոտենալու կամ երեխայի արձանագրությունները ստուգելու մյուս ծնողի իրավունքը:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը նկատի կառնի դպրոցին ներկայացված և դատարանի կողմից ստորագրված ամենավերջին կարգադրությունը, կամ որևէ կարգադրություն չլինելու դեպքում, Կալիֆորնիայի վերահիշյալ օրենքի համաձայն, ծնողներին կտրվի երեխայի խնամակալության հավասար իրավունք:

Ծնողներից խնդրվում է խուսափել և դպրոցի անձնակազմին չներառել երեխայի խնամակալության վեճերին: Եթե ծնողը վստահ չէ, որ դպրոցն ունի իր երեխայի խնամակալության վերջին տեղեկությունները, նա պետք է կապվի դպրոցի հետ և ստուգի, որ դպրոցին տրամադրվել է դատարանի վերջին կարգադրության պատեններ:

ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ (TUPE)

Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության օրենսգրքի 104420 և 104495 հոդվածների համաձայն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հովանավորում է ծխախոտից զերծ միջավայրի կերտմանը: Աշակերտների, պաշտոնյաների ու այցելուների ծխելը որևէ ժամանակ արգելված է կրթաշրջանի սեփականության տակ գտնվող որևէ շրջանում: Այս կանոնի իրագործման վերաբերյալ որևէ հարցով պետք է դիմել դպրոցի ղեկավարներին:

ԱՅԼԸՆՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի հոդված 58501-ը դպրոցի կրթաշրջաններից պահանջում է ծնողներին տեղյակ պահել այլընտրական դպրոցների հնարավորությունների մասին: Կալիֆորնիայի նահանգային օրենքը լիազորում է բոլոր կրթաշրջաններին տրամադրել այլընտրանքային դպրոցներ: Կրթական օրենսգրքի 58500 հոդվածը այլընտրական դպրոցը բնութագրում է այն դպրոցը կամ դպրոցում առանձին այն դասարանը, որը նախագծվել է՝

- Առավելագույնի բարձրացնել աշակերտի հնարավորությունները՝ գարգացնել ինքնավստահության, նախաձեռնության, բարության, հնարամտության, ֆաջության, ստեղծագործության, պատասխանատվության ու երջանկության դրական արժեքները:
- Հասկանալ, որ կրթությունն այն ժամանակ է լավագույնս ստացվում, երբ աշակերտը ուսման ձգտում է ունենում:
- Պահպանել ուսումնական այնպիսի պայմաններ, որն առավելագույնի կրթարժանիքի աշակերտի ինքնամղումը և նրան կիրախուսի, որ իր ազատ ժամերին հետևի իր անձնական հետաքրքրություններին: Այս հետաքրքրությունները կարող են ամբողջապես և ինքնուրույն ձևակերպվել աշակերտի մոտ, կամ կարող են ամբողջապես կամ մասամբ արդյունքը լինել նրանց ուսուցիչների ներկայացրած՝ ուսման ընտրանքների վերաբերյալ ելույթներից:
- Ուսուցիչների, ծնողների ու աշակերտների համար առավելագույնի բարձրացնել ուսման գործընթացն ու առարկաները համատեղ քարտեզագծելու հնարավորությունները: Այս հնարավորությունները շարունակական ու մշտական գործընթաց պետք է լինեն:
- Առավելագույնի բարձրացնել աշակերտների, ուսուցիչների և ծնողների հնարավորությունները՝ համաֆայլ լինելու մշտապես հարափոփոխ աշխարհում, այդ թվում, սակայն ոչ սահմանափակված այն համայնքում ուր գտնվում է դպրոցը:

Եթե որևէ ծնող, աշակերտ կամ ուսուցիչ հետաքրքրված է հավելյալ տեղեկություններ ստանալ այլընտրական դպրոցների մասին, կարող է սույն օրենքի պատճենները ստանալ վարչաշրջանի դպրոցների Գերատեսչից, այս կրթաշրջանի վարչական գրասենյակից և յուրաքանչյուր դպրոցի տնօրենի գրասենյակից:

Կալիֆորնիայի ուսումնական օրենսգրքի 48208, 48980, 48206.3 հոդվածներ.- Տան և հիվանդանոցային ուղեցույցները տրամադրելի են ժամանակավորապես անկարող աշակերտների համար:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 231.5 հոդվածը պահանջում է, որ յուրաքանչյուր կրթաշրջան ունենա գրավոր ֆաղափականություն՝ սեռական ոտնձգությունների մասին: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի Ուսումնական խորհրդի 5145.7 հոդվածը (ներքևում) համապատասխանում է այս պահանջին:

Սեռական և սեռի հիմունքով ոտնձգություն (կրթաշրջանի Ուսումնական խորհրդի ֆաղափականություն 5145.7)- Ուսումնական խորհուրդն արգելում է որևէ աշակերտի նկատմամբ սեռական և սեռի հիմունքով ոտնձգություն (հավաքականորեն, սեռի հիմունքով ոտնձգություն) կրթաշրջանի որևէ պաշտոնյայի, աշակերտի կամ այլ անձի կողմից: Ուսումնական խորհուրդն արգելում է նաև վրեժխնդրական որևէ վարքագիծ կամ արարք որևէ անձի դեմ, որը բողոքել, վկայել, աջակցել կամ այլ կերպ մասնակցել է կրթաշրջանի գանգատարկման գործընթացին: Գերատեսուչը, կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը, պետք է վստահանա, որ կրթաշրջանի բոլոր աշակերտները ստանան տարիքին համապատասխան ուսուցում՝ սեռական և սեռի հիմունքով ոտնձգության մասին: Նման հրահանգներ ու տեղեկություններ պետք է ներառեն՝

1. Թե ինչ արարքներ ու վարքագծեր են հանդիսանում սեռական և սեռի հիմունքով ոտնձգությունները, այդ թվում այն ոտնձգությունները, որոնք կարող են պատահել միասեռական մարդկանց միջև:
2. Հստակ հաղորդագրություն, որ աշակերտները չպետք է հանդուրժեն սեռի հիմունքով որևէ ոտնձգություն:
3. Քաջալերանք՝ զեկուցելու նկատված սեռական ոտնձգության դեպքերը, նույնիսկ եթե ոտնձգության գոհը չի բողոքում:
4. Տեղեկություններ կրթաշրջանի ընթացակարգերի մասին՝ սեռական ոտնձգության ենթարկված մարդկանց գանգատները ուսումնասիրելու համար:

Ուսուցիչները պետք է ֆննարկեն այս կանոնը, իրենց աշակերտների տարիքին համապատասխան ձևերով, և պետք է վստահացնեն, որ չպետք է հանդուրժվի որևէ տեսակի սեռական և սեռի հիմունքով ոտնձգություն:

Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է վստահանա, որ անմիջապես հետաքննվի սեռական ոտնձգության որևէ գանգատ՝ վարչական կանոնների 5145.7 հոդվածի համաձայն: Երբ Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը որոշի թե ոտնձգություն է տեղի ունեցել, նա պետք է անմիջապես համապատասխան ֆայլերի դիմի վերջ տալու ոտնձգությունը և անդրադառնալու գոհի վրա ունեցած ազդեցությունը:

Սեռական ոտնձգությամբ ներգրավված որևէ աշակերտ, կարող է ենթարկվել կարգապահական պատժամիջոցների, ընդհուպ մինչև դպրոցից հեռացում: Որևէ պաշտոնյա, որ թույլատրի կամ ներգրավվի սեռական ոտնձգությամբ կարող է ենթարկվել կարգապահական պատժամիջոցների, ընդհուպ մինչև աշխատանքից հեռացում: (Տես կրթաշրջանի Ուսումնական խորհրդի ֆաղափականության 4119.11, 4219.11, 4319.11 հոդվածները):

Բոլոր գանգատների և սեռական ոտնձգության մեղադրանքները պետք է գաղտնի պահել, բացի այն պարագայից, երբ անհրաժեշտ է հետախուզություն անել կամ ձեռնարկել անհրաժեշտ այլ ֆայլեր: (5 CCR 4964)

Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է գրանցի գեկուցված սեռական ոսնճագույթյան բոլոր պարագաները, որպեսզի կրթաշրջանը կարողանա հետևել, անդրադառնալ և կանխել ոսնճագույթյան կրկնվող պարագաները դպրոցում:

Սեռական և սեռի հիմունքով ոսնճագույթյուն (կրթաշրջանի վարչական կանոն 5145.7) .- կրթաշրջանն արգելում է սեռի հիմունքով ոսնճագույթյունը, այդ թվում՝ սեռական ոսնճագույթյունը:

- A. Արգելված սեռական ոսնճագույթյունը ներառում, սակայն չի սահմանափակվում անցանկալի սեռական մոտեցումներով, սեռական բարեհաստությանը և սեռական բնույթի բանավոր, տեսողական կամ ֆիզիկական շփումով, երբ՝
 - 1. Այդպիսի շփումը բացահայտորեն կամ ոչ բացահայտորեն պայման է դնում անհատի աշխատանքի անցնելուն, ուսումնական իրավիճակին կամ առաջադիմությանը:
 - 2. Անհատի այդպիսի շփումը կամ այդպիսի շփման մերժումը հիմք է ծառայում ուսումնական որոշումների և կամ աշխատանք գտնելուն:
 - 3. Շփումը նպատակադրված է կամ բացասական ազդեցություն ունի անհատի ուսումնական կամ աշխատանքային կատարումների վրա կամ ստեղծում է ահաբեկման, թշնամական կամ տհաճ ուսումնական կամ աշխատանքային միջավայր:
 - 4. Շփման հետ համաձայնելը կամ մերժելը հիմք է ծառայում նպաստներ ու ծառայություններ, պարգևներ ստանալուն կամ ծրագրերի մեջ ներառվելու որոշում կայացնելուն:

- B. կրթաշրջանում արգելված շփումների օրինակներից են հետևյալները, որոնք կարող են սեռական ոսնճագույթյան հիմք համարվել՝
 - 1. Անցանկալի կամ տհաճ հայացքները, սեռական սիրախաղերը կամ առաջարկությունները:
 - 2. Սեռական բնույթի անցանկալի հնչյուններ, ածականներ, ահաբեկումներ, բանավոր չարաշահումներ, նսեմացուցիչ արտահայտություններ կամ սեռականորեն նսեմացուցիչ նկարագրություններ:
 - 3. Անհատի մարմնի մասին պատկերավոր խոսքեր, կամ չափազանց անձնական գրույցներ:
 - 4. Սեռական կատակներ, պատմություններ, նկարներ կամ ժեստեր:
 - 5. Տարածել սեռական բամբասանքներ:
 - 6. Ծաղրել կամ սեռական բնույթի արտահայտություններ անել թվով գերակշռող միասեռ դասարանում արձանագրված աշակերտի մասին:
 - 7. Սեռականապես հպվել անհատի մարմնին կամ հագուստներին:
 - 8. Նեղը գցել կամ արգելափակել նորմալ շարժումները:
 - 9. Ցուցադրել սեռական մոտեցում անպարկեշտ իրեր ուսումնական միջավայրում:
 - 10. Վրեժխնդրության որևէ արարք այն անձի դեմ, որը գեկուցել է սեռական և սեռի հիմունքով ոսնճագույթյան օրենքի խախտում կամ մասնակցել է սեռական ոսնճագույթյան գանգատի հետաքննմանը:

- C. Սեռի հիմունքով ոսնճագույթյան մաս է կազմում բանավոր ու ոչ բանավոր կամ ֆիզիկական հարձակումները, ահաբեկումները կամ սեռի հիմունքով թշնամությունները, թեև դրանք ոչ անպայմանորեն են սեռական բնույթ կրում: Արգելված արարքներից են աշակերտին իր արտաքինի համար հալածելը՝ լինի դա առնական կամ իգական առանձնահատկության դրսևորում:

- D. Սեռի հիմունքով հալածանքների օրինակներից են՝
 - 1. Արհամարհական/նսեմացման խոսքեր կամ հարձակումներ այն աշակերտի նկատմամբ, որը հազնվում է իր սեռին հակառակ ռեժիմ հագուստներ:
 - 2. Թշնամական վերաբերմունք այն աշակերտի նկատմամբ, որը մասնակցել է մարզական խաղերի, որոնք սովորաբար ավելի բարենպաստ են նրա հակառակ սեռի համար:
 - 3. Աշակերտին ահաբեկել՝ նրան հուսալիկու, որ իր սեռի պատճառով չմասնակցի որոշակի մի ուսումնասիրության:
 - 4. Խմբից արտաքսել այն աշակերտին, որը ցանկանում է մասնակցել արտադասարանային ծրագրի, ֆանի որ այդ ծրագիրը սովորաբար ավելի բարենպաստ է նրա հակառակ սեռի համար:
 - 5. Ծաղրանքի ենթարկել ուսումնական առարկայի մեջ դժվարություն ունեցող աշակերտին, պնդելով, որ այդ սեռի աշակերտները «վատ» են այդ առարկայում:

- E. կրթաշրջանի սեռական և սեռի հիմունքով ոսնճագույթյունների ֆաղափականության 5145.7 հոդվածի պատճենը՝
 - 1. Պետք է դպրոցական ծանուցումների հետ մեկտեղ ուղարկվի ծնողներին ու խնամակալներին ուսումնական տարվա սկզբում:
 - 2. Ցուցադրվի աչքի ընկնող մի վայրում՝ դպրոցի տնօրենի գրասենյակի մոտ և համապատասխան այլ վայրերում:
 - 3. Որպես ծանոթացում տրամադրվի նորակա աշակերտներին՝ յուրաքանչյուր ֆառորդի, կիսամյակի կամ ամռան դասընթացների սկզբում:
 - 4. Պետք է տպագրվի որևէ դպրոցի կամ կրթաշրջանի հրատարակություններում, որոնք սահմանում են կրթաշրջանի համապարփակ կանոններն ու ընթացակարգերը և վարժագծային չափանիշերը:

- F. Դպրոցի տնօրենը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցների՝ իրազործելու կրթաշրջանի սեռական և սեռի հիմունքով ոստնագույքյան ֆաղափականությունը: Սույն միջոցներից են՝
1. Մաքրել գոնեիկ կամ չարամիտ գրությունները պատի վրայից:
 2. Անձնակազմին և աշակերտներին, ըստ կարիքի, տրամադրել խորհրդատվություն:
 3. Դիմել համապատասխան պատժամիջոցների:
 4. Գրանցել և պահել գանգատները և դրանց մասին վեճի կայացնելու համար ֆայլերի դիմել:

- G. կրթաշրջանը հետևյալ ձևերով կարճագամֆի հավանական սեռական ոստնագույքյուններին՝
1. Որևէ աշակերտ, ով համոզված է, թե ենթարկվել է սեռական ոստնագույքյան կամ ակնատես է եղել սեռական ոստնագույքյան, կարող է տեղեկացնել կամ գանգատ ներկայացնել դպրոցի որևէ պաշտոնյայի: Դպրոցի պաշտոնյան պետք է իր հերթին տեղեկացնի ոչ խտրականության հարցով զբաղվող կրթաշրջանի պատասխանատու անձին/տնօրենին դպրոցական երկու օրերի ընթացքում: Ավելացնենք նաև, որ դպրոցի պաշտոնյան, որն ակնատես է եղել աշակերտի նկատմամբ սեռական բնույթի որևէ ոստնագույքյան, պետք է տեղեկացնի պատասխանատուին/տնօրենին դպրոցական երկու օրերի ընթացքում, անկախ այն բանից եթե գոհը այդ մասին գանգատվել է կամ ոչ:
 2. Հավանական ոստնագույքյան մասին տեղեկանալուց տաս օրվա ընթացքում պատասխանատուին/տնօրենը կատարի հետաքննություն, այդ թվում՝ հարցազրույց բողոքարկուի և այլ վկայների հետ, (օրինակ՝ որևէ անհատ, որ իր ենթարկվել է ոստնագույքյան, որևէ անհատ որ իր ներգրավվել է ոստնագույքյան մեջ և որևէ անհատ, որ հավանաբար տեղյակ է եղել ոստնագույքյան մասին) և բնակավայրում համապատասխան ֆիզիկական ապացույցները (օրինակ՝ նամակագրությունները/այլ գրույցները, լուսանկարները, դիջիտալ պատկերները կամ չարամիտ պատի գրությունները): Պատասխանատուին/Տնօրենը դպրոցական հինգ օրերի ընթացքում իր հետաքննումը ավարտելուց հետո, իր որոշումը կտա, թե արդյոք տեղի է ունեցել ենթադրյալ ոստնագույքյունը, դրա շրջանակը և միջադեպի ծանրությունը, հանցավորի ինքնությունը և գոհի վնասը:
 3. Պատասխանատուին/Տնօրենը գրանցելու է հետաքննման արդյունքները և որոշակի այն փուլերը, որոնք նախատեսվել է այդ հետաքննումը կատարելու և եզրակացության հասնելու համար:
 4. Հետաքննումը ավարտելուց դպրոցական տասնհինգ օրերի ընթացքում, պատասխանատուին/տնօրենը ամփոփ գործողությունների որոշում է կայացնելու՝ գանգատին ընթացք տալու համար, այդ թվում՝ հանցագործին պատժելը, գոհի և հանցագործի համար խորհրդատվություն պահանջելը, միջամտման միջոցներով թշնամական միջավայրի վերացումը և ոստնագույքյան կրկնումը կանխելու ֆայլերի դիմելը: Նման ուղղիչ գործողությունները, եթե լինեն կամ եթե անհրաժեշտ լինեն, պետք է ամփոփագրվեն:
 5. Պատասխանատուին/Տնօրենը հետևում է միջամտման գործողությունների արդյունավետությանը և ձեռնարկում է լրացուցիչ միջոցներ, որտեղ ապարդյուն են ապացուցվում ամփոփ գործողությունները:
 6. Պատասխանատուին/Տնօրենը նամակով տեղեկացնում է բողոքարկուին՝ դպրոցի/կրթաշրջանի բացահայտումների, կիրառած որոշումների և հիմնավորումների մասին:
 7. Բացահայտումների արդյունքը նամակով տեղեկացվում է բողոքարկուին, ինչպես նաև պատասխանատուին/տնօրենին որոշման դեմ, տասնհինգ օրերի ընթացքում, դպրոցների գերատեսչին նամակով բողոքելու նրա իրավունքների մասին: Գերատեսուչը վերանայելու է բողոքագիրը և տաս օրերի ընթացքում բողոքարկուին տեղեկացնելու է իր որոշումը:

ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի 1312.3 վարչական կանոններ— Գլենդելի հանրային դպրոցների Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ ուսումնական ծրագրերը ղեկավարելիս կրթաշրջանն ունի նահանգային ու դաշնային օրենքներին և կանոններին հնազանդվելու գլխավոր պատասխանատվություն: Կրթաշրջանը պետք է հետաքննի և աշխատի տեղական մակարդակով լուծել գանգատները: Նման օրենքների չհնազանդման և կամ հավանական անօրինական խտրականության, հալածման, ահաբեկման կամ կոլագանության հարցերը ենթակա են գանգատարկման ընթացակարգերի: Կրթաշրջանը պետք է հետևի գանգատարկման ընթացակարգին, երբ գանգատը վերաբերում է աշակերտի վնասին, կանխավնասին կամ այլ ծախսերին՝ նահանգային ու դաշնային օրենքին համապատասխան կատեգորիկ նպաստ ստացող ծրագրերի, երևիսյի զարգացման և երևիսյի սննդառության ու հատուկ կրթության ծրագրերի և աշխատանքային ասպարեզի կրթական ծրագրերի հնարավորություններից օգտվելուն արգելք հանդիսանալու համար:

1. Կրթաշրջանը պետք է հետևի գանգատարկման ընթացակարգերին, երբ գանգատը ներկայացվում է հավանական ապօրինի խտրականության, հալածման, ահաբեկման կամ կոլագանության խնդիրներին, ինչպես հայտարարված է Ուսումնական օրենսգրքի 200 և Կառավարության օրենսգրքի 11135 հոդվածներում, այդ թվում՝ իրական կամ ընկալված սեռի, սեռական կողմնորոշման, սեռի, էթնիկական խմբի նախնան, ցեղի, նախահայրերի, ազգային ծագման, կրոնի, մաշկի գույնի կամ մտային կամ ֆիզիկական անկարողության, տարիքի կամ անհատի կապակցությունը մի անձի կամ մի խմբի հետ, որոնք ունեն այս առանձնահատկությունները, կրթաշրջանի այն ծրագրերում կամ գործողություններում, որոնք ֆինանսավորվում են նահանգից (5 CCR 4610):
2. Բավարար ֆանկությունը դասագրքերի կամ ուսումնական նյութերին առնչվող խնդիրները, աշակերտի ու անձնակազմի առողջությանն ու անվտանգությանն առնչվող հրատապ կամ արտակարգ պարագայի հարմարությունների խնդիրները, ինչպես նաև ուսուցիչների թափուր պաշտոնների ու անկատար հանձնարարությունների և աշակերտին տրամադրվող ուսուցման կամ ծրագրերի պակասի, այդ թվում՝

մինչև 12-րդ դասարանի ավարտը դպրոցի ելֆի ֆննությանը չհաջողած խնդիրները, պետք է հետաքննվեն կրթաշրջանի Williams uniform complaint procedure անվամբ գանգատարկման ընթացակարգի համաձայն (AR 1312.4):

Ուսումնական խորհուրդն արգելում է փոխվրեժխնդրության որևէ արարք, որը կապված լինի գանգատի ներկայացմանը, ինչպես նաև խորականության, հալածման, ահաբեկման կամ կոլագանության դեպքերի գեկուցմանը կամ գանգատարկման ընթացակարգերի մասնակցությանը: Սույն մասնակցությունը որևէ կերպ չպետք է ազդի գանգատարկուի իրավիճակի, գնահատականների կամ աշխատանքների վրա:

Ուսումնական խորհուրդը ֆաջակերում է՝ հնարավորին չափ շուտափույթ անպաշտոնական և դպրոցական մասշտաբով գանգատների լուծում և միջամտություն:

Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ չեզոք միջնորդը կարող է հանախ փոխզիջում առաջարկել, որը ընդունելի է բոլոր կողմերի համար: Գանգատարկման ընթացակարգերի համաձայն, երբ բոլոր կողմերը համաձայնում են խնդիրը լուծել միջնորդի միջոցով, գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է նախաձեռնի այդ գործընթացը: Գերատեսուչը կամ նրա կողմից ներկայացուցիչը պետք է վստահանա, որ արդյունքները համապատասխանեն նահանգային ու դաշնային օրենքներին ու կանոններին:

Ուսումնական խորհուրդը հարգում է աշակերտի ու պաշտոնյայի տեղեկությունների գաղտնիության իրավունքը: Խորականության, հալածման, ահաբեկման կամ կոլագանության դեպքերի գանգատների հետաքննումը պետք է կատարվի՝ պահպանելով կողմերի ու ապացույցների գաղտնիությունը: Սա ներառում է գանգատարկու անձի ինֆորմացիայի գաղտնիությունը, ի քացառյալ այն պարագայից, երբ գերատեսուչի կամ նրա ներկայացուցչի հայեցողությամբ, յուրաքանչյուր խնդրի համաձայն, հետաքննություն կամ հետազոտություն է որոշվում: Ինչպես բոլոր գանգատների դեպքում, որտեղ գրանցվում է խորականության, ոտնձգության, ահաբեկման կամ կոլագանության իրադեպ, գերատեսուչը կամ նրա ներկայացուցիչը գաղտնի պետք է պահի գանգատարկու անձի ինֆորմացիան, այնքան ժամանակ, երբ դա չի խոչընդոտի գանգատի հարցաֆնմանը:

Գերատեսուչը կամ նրա ներկայացուցիչը պետք է վստահանա, որ գանգատը հետաքննող պաշտոնյաները լավատեղյակ են իրենց պատասխանատվության սահմանների օրենքներին ու ծրագրերին:

Կրթաշրջանի Williams uniform complaint procedure անվամբ ընթացակարգերը AR 1312.4, պետք է օգտագործվեն հետևյալ գանգատների ուղղությամբ հետախուզություն կատարելու կամ լուծում տալու ընթացքում՝

1. Բավարար ֆանակով դասագրքերի կամ ուսումնական նյութերի պակաս:
2. Հրատապ կամ շտապ օգնության հարմարանքների դրություն, վիճակ, որոնք կարող են սպառնալ աշակերտի ու անձնակազմի առողջությանն ու անվտանգությանը:
3. Ուսուցիչների թափուր պաշտոններ և անկատար հանձնարարություններ:
4. Որևէ աշակերտի տրամադրվող ուսուցման կամ ծրագրերի պակասը, այդ թվում մինչև 12-րդ դասարանի ավարտը դպրոցի ելֆի ֆննությանը չհաջողած խնդիրները:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի 1312.3 վարչական կանոններ

Նպատակ և տեսադաշտ

A. Այս ընթացակարգերը, որոնք շարադրված են Title 5 կանոնների 4600-4687 բաժիններում և համապատասխանում են ղեկավար մարմնի օրենքներին ու ընթացակարգերին, վերաբերում են՝ դաշնային կամ նահանգային օրենքների խախտման գծով գանգատների գրանցմանը, հետաքննմանն ու վեճի կայացման աշխատանքներին, այդ թվում՝ ապօրինի խորականության, ահաբեկման, կոլագանության, և աշակերտի վնասումներին առնչվող օրենքներին չհնազանդվելու հայտարարություններին: Այս հոդվածի նպատակն է՝ ստեղծել գանգատարկման միատեսակ համակարգ՝ որոշակի այն ծրագրերի ու աշխատանքների համար, որոնք ստանում են նահանգային կամ դաշնային հատկազումար և ներառում են հետևյալ ծրագրերը՝

1. Consolidated Categorical Aid անվամբ կատեգորիկ ծրագրեր, որոնք ցանկագրվել են ուսումնական օրենսգրքի 64000 (a) հոդվածում:
2. Career/Technical Education անվամբ աշխատանքային ասպարեզի/տեխնիկայի ծրագրեր, որոնք հաստատվել են ուսումնական օրենսգրքի 52300-ից 52480 հոդվածների համաձայն:
3. Child Care Development անվամբ երեխայի զարգացման ծրագրեր, որոնք հաստատվել են ուսումնական օրենսգրքի 8200-ից 8493 հոդվածների համաձայն:
4. Child Nutrition անվամբ երեխայի սննդառության ծրագրեր, որոնք հաստատվել են ուսումնական օրենսգրքի 49490-ից 49560 հոդվածների համաձայն:
5. Special Education անվամբ հատուկ կրթության ծրագրեր, որոնք հաստատվել են ուսումնական օրենսգրքի 56000-ից 56885 և 59000-ից 59300 հոդվածների համաձայն:
6. Գանգատներ, որոնք պնդում են անօրինական խորականություն, հալածանք, ահաբեկում, կոլագանություն կամ աշակերտի վնասումներին առնչվող անօրինական հայտարարություններ՝ տարիքի, իրական կամ ընկալված սեռական հասկացության, սեռական կողմնորոշվածության, սեռի, ցեղային պատկանելիության, ազգության, կրոնի, ազգային պատկանելիության, գույնի և մարմնային կամ մտային անկարողության կամ վերոհիշյալ առանձնահատկություններով անձի կամ խմբի հետ կապակցություն ունենալու պատճառով, որոնք առաջացել են տեղական որևէ գործակալության միջոցով կառավարվող որևէ ծրագրում կամ աշխատանքում, որն ուղղակի ֆինանսավորվում կամ նյութական օժանդակություն է ստանում նահանգից:

Աշակերտի վնասը կազմում է այն վնասը, նախավնասը կամ աշակերտի ծնողին կամ խնամակալին պարտադրված այն վնասը, որը խախտելով նահանգային և սահմանադրական օրենսգրքը, ըստ որի պահանջվում է բոլոր աշակերտներին ճիշտորեն տրամադրել ուսումնական ծրագրերը, առանց հաշվի առնելու նրանց ընտանիքի ֆինանսական կարողությունը կամ վնասման պատրաստակամությունը կամ հատուկ մեթոմնագրերի խնդրանքը: Ուսումնական ծրագրերը այն ծրագրերն են, որոնք առաջարկվում են դպրոցի, կրթաշրջանի, Զարթեր անվամբ դպրոցի կամ կրթական վարչաշրջանի կողմից, որոնք հանդիսանում են կրթության հիմնաքարը, այդ թվում, բայց ոչ սահմանափակված ուսումնական և արտադասարանային ծրագրերը:

A. Աշակերտի վնասը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալներով՝

- Դպրոցում կամ դասարանում արձանագրվելու նպատակով աշակերտից գանձված վնասը, կամ որևէ դասարանի կամ արտադասարանային աշխատանքի մասնակցելու պայմանը, անկախ այն բանից, որ դասարանը կամ ծրագիրն ընտրական, պարտադիր՝ կամ բեռնիք հավաքելու նպատակով է:
- Որևէ նախավնաս կամ այլ վնաս, որը պահանջվում է աշակերտից՝ կողպեք, դարակ, երաժշտական գործիք, հագուստ կամ որևէ սարք ունենալու համար:
- Ուսումնական աշխատանքին կապակցվող որևէ սարք, պիտույք, հագուստ կամ նյութ գնելու համար աշակերտից պահանջվող որևէ վնաս:

B. Այս ընթացակարգը չի վերաբերում հետևյալ գանգատներին, որոնք հետաքննության համար կհանձնվեն համապատասխան մարմիններին՝

1. Երեխայի չարաշահման հայտարարություններին վերաբերող հարցերը պետք է հանձնել County Department of Social Services (DPSS), Protection Services Division անվամբ բաժանմունքին կամ համապատասխան իրավապահ գործակալություններին:
2. Child Development անվամբ երեխայի զարգացման ծրագրի առնչությամբ երեխայի առողջապահության ու ապահովության վերաբերյալ գանգատները պետք է հանձնել Department of Public Social Services անվամբ գրասենյակին՝ լիցենզավորված հարմարությունների և Child Development-ի շրջանային ղեկավարության՝ ոչ լիցենզավորված հարմարությունների համար:
3. Երեխայի սննդառության ծրագրերի կամ Title IX of the Educational Amendments of 1972-ի կապակցությամբ խտրականության գանգատները միայն պետք է հանձնել Քաղաքացիական իրավունքների գրասենյակին (OCR): Title IX-ին վերաբերող գանգատները պետք է հղել միայն OCR-ին, եթե չկա նահանգային խտրականության օրենք կամ կարգավորման կանոններ: Համաձայնության չգալու դեպքում, սույն գանգատների նախնական հարցաքննությանը և կամ ուսումնասիրությանն ընթացք կտրվի OCR-ի միջոցով: Գանգատարկուին պետք է տեղեկացնել, գրանցված փոստի միջոցով, եթե նրա գանգատը գերատեսչի կամ նրա ներկայացուցչի միջոցով հանձնվել է OCR-ին:
4. Աշխատանքային խտրականության վերաբերյալ գանգատները, Title 22, CCR, հոդված 98410-ի համաձայն, պետք է հղել State Department of Fair Employment and Housing-ին (DFEH) բաժանմունքին: Գանգատարկուին պետք է տեղեկացնել, գրանցված փոստի միջոցով, եթե նրա գանգատը հանձնվել է DFEH-ին:
5. Խաբեարարության և խարդախության վերաբերյալ գանգատները պետք է հղել DFEH-ի տնօրենին և Department's Legal Office-ի գրասենյակին:

C. Այս ընթացակարգում օգտագործված տերմինների նշանակությունները՝

1. "Appeal" (բողոք) նշանակում է կրթաշրջանի Ուսումնական խորհրդին կամ կրթության վարչությանը ներկայացրած բողոքագիր, որով գանգատարկուն խնդրում է վերանայել կամ վերստին քննարկել կրթաշրջանի որոշումը:
2. "Complainant" (գանգատարկու) նշանակում է որևէ անձ ներառյալ անհատի օրինավոր ներկայացուցիչը կամ որևէ շահախնդիր անհատ, հասարակական գործակալություն կամ հաստատություն, որը գրավոր գանգատ է ներկայացրել դաշնային կամ նահանգային կանոնների խախտման, ներառյալ նահանգից կամ դաշնային կառավարությունից ուղղակի նյութական օժանդակություն ստացող որևէ կազմակերպության կամ հաստատության ծրագրերի ապօրինի խտրականության համար:
3. "Complaint" (գանգատագիր) նշանակում է գրավոր և ստորագրված մի հայտարարություն, որտեղ նշվում է դաշնային կամ նահանգային կանոնների խախտում, որը կարող է ներառել նաև ապօրինի խտրականության պարագա:
4. "Complaint Investigation" (գանգատարկման հետազոտություն) նշանակում է բողոքագրի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով կրթաշրջանի կողմից կատարված վարչական որևէ պրոցես:
5. "Complaint Procedure" (գանգատարկման ընթացակարգ) նշանակում է կրթաշրջանի կողմից կատարվող ներքին պրոցես՝ գանգատագրերին լուծում տալու համար:
6. "Days" (օրեր) նշանակում է օրացույցային օրեր, եթե այլ կերպ բացատրություն տրված չէ:

Գանգատների կարգավորում

A. Խրախուսելի է, որ ծնողները, աշակերտներն ու համայնքի անդամներն իրենց մտահոգության առարկա խնդիրներն ու գանգատները նախ փորձեն լուծել դպրոցի տնօրինության կամ ծրագրի պատասխանատուի հետ: Եթե այդ մակարդակում խնդիրը չլուծվի, ապա կարող են իրենց գանգատը գրավոր հանձնել կրթաշրջանի ուշադրության: Կրթաշրջանը, որը հիմնականում հնազանդում է դաշնային ու նահանգային օրենքներին ու կանոններին, պատասխանատու է վստահանալ, որ խնդրին

վերահասու անձինք լավատեղյակ լինեն այն օրենքների և ծրագրերի մասին, որոնց համար նշանակվել են հետախուզություն կատարել:

B. Գանգատարկուն կարող է հետևյալ ընթացակարգերի համաձայն պաշտոնական գանգատագիր ներկայացնել՝

1. Այս ընթացակարգի համաձայն գանգատը պետք է ներկայացնել կրթաշրջանի Գերատեսչին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին, որի գրասենյակի հասցեն է՝ 223 North Jackson Street, Glendale, California 91206:
 - a. կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը կգրանցի գանգատագրերը՝ յուրաքանչյուրի վրա ծածկագիր և թվական դրոշմելով:
 - b. կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը կապահովի կողմերի ու փաստերի գաղտնիությունը՝ գանգատի հետախուզության ընթացքում:
2. Խորականություն, հալածանքի, ահաբեկման և կոլագանության կապակցությամբ ենթադրյալ գանգատները պետք է ներկայացնել կատարված դեպքից մինչև վեց (6) ամսվա ընթացքում, կամ այն թվականից երբ գանգատարկուն առաջին անգամ տեղեկացել է ենթադրյալ խորականության ապացույցների մասին:
 - a. Խորականության, հալածանքի, ահաբեկման և կոլագանության կապակցությամբ ենթադրյալ գանգատը պետք է հանձնի այն անձը, որն ուղղակիորեն տուժել է կամ այն անհատը, որի համոզմամբ, որևէ անհատ կամ հավաքականություն ենթարկվել է խորականության:
3. Աշակերտի վնասների կապակցությամբ գանգատները կարելի է անման ներկայացնել, եթե գանգատը տրամադրում է ապացույցներ կամ ապացույցներով տեղեկություններ՝ որոնք հիմնավորում են ենթադրյալ հակաօրինական վնասների խնդիրը:
4. Եթե գանգատարկուն անուս լինելու կամ ֆիզիկական անկարողության պատճառով չի վիճակի չլինի գրավոր գանգատ ներկայացնել, գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը կօգնի նրան ներկայացնել գանգատը:

C. Գանգատագիրը ստանալուց հինգ (5) օրվա ընթացքում, կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է՝

1. Ստուգի և հաստատի, եթե գանգատագիրը ներկայացվել է ժամանակին:
 - a. Եթե գանգատագիրը ժամանակին չի հանձնվել, ապա կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը կարող է դա մերժել, բացի այն պարագայից, երբ ներկայացման ժամկետը հետաձգվել է: Ժամկետն հետաձգելու խնդրանքը գրությամբ պետք է հանձնել կրթաշրջանի գերատեսչին, նշելով հետաձգման պատճառները: Ներկայացված պատճառաբանությունները հարմար նկատելով, կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը կարող է այդ ժամանակաշրջանն ինսուլն (90) օրով հետաձգել:
 - b. Եթե գանգատագիրը ժամանակին է հանձնվել կրթաշրջանին, ապա լիազորված անձը կանցնի գանգատագրի հետախուզման աշխատանքին:
2. Գանգատարկուին հանձնարարի, որ գանգատագիրը ներկայացնի համապատասխան այն գործակալության, որը գրադրում է այդ հարցով:
3. Նշանակի ծրագրի վարիչ՝ հարկ եղած հետախուզությունները կատարելու համար, բացի երեսփոխի չարաշահմանը վերաբերող գանգատները, որոնք անմիջապես պետք է հանձնվեն համապատասխան գործակալության ուշադրության:
4. Միջնորդի օգնությամբ գանգատը գնահատի (երրորդ անձի միջամտություն՝ գանգատի գաղտնի տեղեկությունները լսելու և դատելու) վեճին լուծում տալու համար: Միջնորդության մաս պետք է կազմի հետևյալ հիմունքները՝ վերապատրաստված միջնորդ, օրենքի ու կանոնների համաձայն պայմանագրի, պայմանագրի առաքում երկու կողմերին, կայացած պայմանագրի որոշումների հետևում, ավարտ՝ վաթսույն (60) օրերի ընթացքում:
5. Գանգատարկուին տրամադրի կրթաշրջանի կանոնների ու գանգատարկման ընթացակարգի անգլերեն ու մայրենի լեզվով պատճենները, որոնց կարելի է պատասխանել անգլերեն կամ գանգատարկուի մայրենի լեզվով:

Գանգատի ստուգում և վճիռ

A. Գրավոր յուրաքանչյուր գանգատ պետք է հետաքննվի ստացված թվականից տասնհինգ (15) օրվա ընթացքում, ծրագրի ղեկավարի միջոցով, որը՝

1. Հնարավորություն կընձեռի գանգատարկուին կամ նրա ներկայացուցչին և կամ երկուսին, ինչպես նաև շրջանի ուսումնական խնդիրների ներկայացուցչին, որ բանավոր կամ գրավոր, անգլերենով կամ գանգատարկուի մայրենի լեզվով ներկայացնեն խնդրին առնչվող տեղեկություններ, որի պատասխանը կարող է տրվել անգլերենով կամ գանգատարկուի մայրենի լեզվով:
2. Հնարավորություն կընձեռի կողմերին, որ հանդիպեն ու բնակարկեն գանգատը կամ հարցախնդրեն միմյանց կամ միմյանց վկաներին:
3. Փաստեր կհավաքի ուրիշ անհատներից, որոնք ակնատես են եղել կատարված դեպքին կամ կարող են ենթադրյալ խախտման մասին տեղեկություններ հայտնել:
4. Կվերանայի փաստաթղթերը, որոնք կարող են տեղեկություններ տրամադրել կամ վկայություն տալ ենթադրյալ խախտման մասին:

5. Գրավոր զեկույց ու հանձնարարություններ կներկայացնի՝ ներառելով գանգատի հետաքննության արդյունքները և հավաքած ապացույցները, ուղղիչ գործողությունները, եթե կան, և գանգատի ներկայացման դրդապատճառները, գերատեսչին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

B. Գանգատի հետաքննման ընթացքում համագործակցություն

1. Եթե գանգատարկուն մերժի հարցաքննիչին ապացույցներ կամ գանգատարկմանը կապակցվող փաստեր ներկայացնել և կամ այսպես ասած մերժի համագործակցել կամ որևէ կերպ արգելի հանդիսանա հարցաքննմանը, ապա ապացույց չլինելու պատճառով գանգատը չեղյալ կհամարվի:
2. Եթե կրթաշրջանը մերժի հարցաքննիչին ապացույցներ կամ գանգատարկմանը կապակցվող փաստեր ներկայացնել և կամ այսպես ասած մերժի համագործակցել կամ որևէ կերպ արգելի հանդիսանա հարցաքննմանը, ապա հավաքված ապացույցների հիման վրա արդյունքը կլինի հատուցման հարկադրում ի շահ գանգատարկուի:

C. Գանգատի պատասխանը

1. Գանգատագիրը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում կրթաշրջանի գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը գանգատարկուին գրավոր պետք է տեղեկացնի կատարված հետաքննությունների և որոշումների մասին՝ անգլերենով կամ գանգատարկուի մայրենի լեզվով:
2. Առաջարկված վեճը պետք է պարունակի հավաքած ապացույցների արդյունքները, օրենքի եզրակացությունները և տնօրինության կարգադրությունները, այդ թվում՝ ուղղիչ գործողությունները, եթե կան, տնօրինության պատճառաբանությունները և առաջարկված վեճի դեմ Ոստումնական խորհրդին կամ Կալիֆորնիայի կրթության վարչությանը բողոքելու գանգատարկուի իրավունքը և դրան հետևելու ընթացակարգերը:
3. Վեճը վերջնական կհամարվի, եթե գանգատարկուն վեճը ստանալուց յոթ (7) օրվա ընթացքում բողոք չներկայացնի Ոստումնական խորհրդին: Այնուամենայնիվ, գանգատարկուի իրավունքն է, որ վեճը վերջնական համարվելուց տասնհինգ (15) օրվա ընթացքում բողոք ներկայացնի Կալիֆորնիայի կրթության վարչությանը:
4. Յուրաքանչյուր գանգատ պետք է լուծվի գանգատագիրը ստանալուց վաթսուն (60) օրվա ընթացքում, ներառյալ Ոստումնական խորհրդին բողոք ներկայացնելու ժամանակամիջոցը, եթե գանգատարկուն գրավոր չի երկարաձգել ժամանակամիջոցը:
5. Անօրինական խտրականության, հալածանքի, սահարեկման ու կոլագանության հարցերով գանգատների դեպքում, գանգատարկուն իրավունք ունի դիմել ֆաղափացիական օրենքի, կրթության վարչությանը բողոք ներկայացնելուց վաթսուն (60) օրից ոչ ավելի շուտ, ի քացառյալ դատական որոշումից, որի համար հետաձգում չի կիրառվում:
6. Եթե վավերական համարվի աշակերտի վնասի ուղղությամբ գանգատը, ապա հանրային դպրոցը նահանգային խորհրդի օրենքի համաձայն, միջոց պետք է հայթայթի՝ լրիվ հատուցում տալու աշակերտին, ծնողին և խնամակալին:

D. Բողոքարկում Ոստումնական խորհրդին

1. Եթե գանգատարկուն դժգոհ մնա առաջարկված վեճից, նա կարող է յոթ (7) օրվա ընթացքում առաջարկված որոշման դեմ գրավոր բողոքարկել Ոստումնական խորհրդին: Ոստումնական խորհուրդը կարող է խնդրին ընթացք տալ իր հերթական նիստերում կամ արտակարգ նիստ գումարել սահմանված վաթսուն (60) օրվա ժամանակաընթացքում՝ գանգատարկուին պատասխան տալու համար:
2. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը Ոստումնական խորհրդի հերթական նիստում օրակարգի կետ պետք է դարձնի առաջարկված որոշումը:
3. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը գանգատարկուին և նրա ներկայացուցչին և կրթաշրջանի ներկայացուցչին պետք է տեղեկացնի՝ Ոստումնական խորհրդի ժողովում առաջարկված որոշման վերաբերման թվականի ու ժամի մասին:
4. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը գանգատարկուին պետք է տեղեկացնի առաջարկված որոշման խնդիրը դոկիակ ժողովում վերաքննելու մասին, քացի այն պարագայից, երբ գանգատարկուն կամ նրա ներկայացուցիչը խնդրում է Ոստումնական խորհրդի դոկրաց հանրային ունկնդրություն, քացառությամբ, երբ նման խնդիրը հրապարակորեն չպետք է քննարկվի, երբ խտրականության հայտարարությունը կարող է վրեժխնդրության և ֆինանսիաների գալույթ և պողոթնում առաջացնել կամ վտանգել խնդրին ներառված որևէ աշակերտի կամ պաշտոնյայի անձնական իրավունքները:
5. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը գանգատարկուին կամ նրա ներկայացուցչին պետք է տեղեկացնի, որ նախքան խորհրդի դոկիակ քննարկումը, նրանք կարող են ներկայանալ ժողովին և հայտնել իրենց տեսակետը:
6. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է գանգատարկուին տեղեկացնի՝ դոկրաց կամ հանրությանն ազատ ժողովում ներկա լինելու նրա իրավունքի մասին, երբ ուսումնական խորհուրդն ընդունում է առաջարկված որոշումը:
7. Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է գանգատարկուին տեղեկացնի վրեժխնդրությունից պաշտպանվելու ապահովության մասին:

E. Ոստումնական խորհուրդը պետք է՝

1. Վեճը վերջնական համարի կամ մերժի առաջարկված որոշումը և թելադրի ուղղիչ այլ միջոցներ:

2. Գանգատագիրը ստանալու թվականից վաթսու (60) օրվա ընթացքում գանգատարկուին գրավոր տեղեկացնի Ոստումնական խորհրդի որոշման մասին, անգլերեն և նրա մայրենի լեզվով, բացի այն պարագայից, երբ գանգատարկուն ժամկետն երկարաձգելու գրավոր դիմում ներկայացնի:
3. Գանգատարկուին գրավոր, անգլերեն և նրա մայրենի լեզվով, տեղեկացնի տրված որոշման դեմ Կալիֆորնիայի կրթության վարչությանը տասնհինգ (15) օրվա ընթացքում բողոքարկելու նրա իրավունքի մասին, որը պետք է պարունակի գանգատարկման բնագրի և կրթաշրջանի տված որոշման պատճենները:

Բողոքարկում Կալիֆորնիայի կրթության վարչության

- A. Որևէ բողոքարկու կարող է կրթաշրջանի վերջնական վճիռ կամ Ոստումնական խորհրդի վճիռ հայտարարման թվականից տասնհինգ (15) օրվա ընթացքում գրավոր բողոքարկել Կալիֆորնիայի կրթության վարչության:
 1. Բողոքարկուն պետք է ներառի բողոքագրի, կրթաշրջանի և Ոստումնական խորհրդի որոշման պատճենները:
- B. Կալիֆորնիայի կրթության վարչությունից բողոքարկման ծանուցումը ստանալով, կրթաշրջանը պետք է առաջի հետևյալ բոլոր փաստաթղթերի պատճենները Կալիֆորնիայի կրթության վարչության՝
 1. Բնագիր բողոքագրի:
 2. Տեղական գործակալության կողմից կայացված որոշման պատճենը:
 3. Տեղական գործակալության կողմից կայացված հետաքննության բնույթը և հետախուզման տևողությունը, եթե ներառված չեն տեղական գործակալության որոշման զեկուլյի մեջ:
 4. Կրթաշրջանի հետաքննության գործի պատճենը:
 5. Գանգատը լուծելու նպատակով որևէ գործողության զեկուլյը:
 6. Տեղական գործակալության գանգատարկման ընթացակարգերի պատճենը:
 7. Խնդրին առնչվող այլ տեղեկություններ, որոնք կարող են պահանջվել Կալիֆորնիայի կրթության վարչության կողմից:

Ծանուցում

- A. Ամեն տարի աշակերտներին, ծառայողներին, ծնողներին և կամ խնամակալներին, կրթաշրջանի խորհրդատվական հանձնախմբերին, դպրոցի խորհրդատու մարմիններին, հատուկ մասնավոր դպրոցների պաշտոնյաներին կամ ներկայացուցիչներին և հետաքննվող այլ կողմերին պետք է տրամադրվի կրթաշրջանի գանգատարկման ընթացակարգերը:
- B. Սույն ծանուցումը պետք է լինի գրավոր, անգլերեն և մայրենի լեզվով կամ ստացողի հասկանալի լեզվով, երբ հնարավոր լինի կամ պահանջվի օրենքով:
- C. Սույն ծանուցումը պետք է ներառի հետևյալները՝
 1. Ընթացակարգի համաձայն գանգատները պետք է հանձնել կրթաշրջանի գերատեսչին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:
 2. Գանգատներ, որոնք հետաքննության համար պետք է ուղղվեն այլ մարմինների:
 3. Ոստումնական խորհրդին և կամ Կալիֆորնիայի կրթության վարչությանը բողոքելու գանգատարկուի իրավունքը, բողոք, որին արդեն անդրադարձել է կրթաշրջանի գերատեսուչը:
 4. Տեղեկացնել, որ ցանկության դեպքում գանգատարկուն կարող է խորհրդակցել իրավաբանի հետ՝ ֆաղափարակալ օրենքով իր բողոքին ընթացք տալու համար:
 5. Կապվել կրթաշրջանի այն պաշտոնյայի հետ, որից կարելի է անվճար ստանալ գանգատարկման ընթացակարգերի պատճենները:

Եթե ձեր կարծիքով ձեր երեխայի նկատմամբ խտրականություն է գործադրվել

Կրթաշրջանը հաստատել է գանգատարկման ընթացակարգեր՝ լուծելու ենթադրյալ *խտրականություն, անհանգստության, վախճանության, ահաբեկման և կոլագանության հետ կապված հարցերը, հիմնվելով իրական կամ ընկալված առանձնահատկության, այդ թվում՝ հաշմանդամության, սեռի, սեռի ճանաչման, սեռի արտահայտման, ազգության, ցեղի կամ էթնիկայի, սեռական կողմնորոշման կամ վերոհիշյալ առանձնահատկություններով անձի կամ խմբի հետ կապակցություն ունենալու պատճառով*: Գանգատարկման ընթացակարգերը կարելի է օգտագործվել նաև, երբ արծարծված գանգատները պնդում են մահացալից և կամ դաշնային օրենքներին հնազանդվելու ձախողում՝ չափահասի կրթության, համախմբված կատեգորիկ օգնության ծրագրերի, գաղթականների կրթության, աշխատանքային կրթության, երեխայի խնամատարության և գարգացման ծրագրերի, երեխայի սննդառության ծրագրերի և հատուկ կրթության ծրագրերի ընթացքում: Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանը անվճար տրամադրում է գանգատարկման ընթացակարգերի պատճենները: Գանգատարկման հարցաթերթիկը ստանալու կամ լրացուցիչ տեղեկությունների համար կապվել՝ Կատեգորիկ ծրագրերի գրասենյակի դիրեկտոր Դոնա. Cynthia McCarty-Foley-ի հետ (818) 241-3111 ներքին 457 հեռախոսահամարով:

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱՄ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի Ոստումնական խորհրդի ֆաղափականություն 1312.5
 Ոստումնական խորհուրդը իր հանձնառությունն է համարում ուսումնական ու վարչական ընթացակարգերը կարգավորելու ընթացքում դպրոցներին ու կրթաշրջանին գերծ պահել խանգարումներից և արգելել չլիազորված անձերի մուտքը դպրոցի կամ կրթաշրջանի շրջապատում: Կրթաշրջանի աճակազմի անդամները

հարգալից վերաբերմունք կցուցաբերեն պաշտոնակիցների, աշակերտների, ծնողների ու համայնքի անդամների նկատմամբ և փոխադարձ կակնկալեն:

Այս կանոնակարգը չի միտում որևէ անհատի գրկել ազատ խոսքի իրավունքից, այլ միայն պահով ու չարաշահումից գերծ աշխատանքային միջավայր պահպանել մեր անձնակազմի ու աշակերտների համար: Աշակերտին դրական օրինակ հանդիսանալու համար, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ակնկալում է ֆաղափակիր ու դրական հաղորդակցություն: Կրթաշրջանը չի հանդուրժի կոպիտ, չար, անտարբեր և կամ բշտամական ու ագրեսիվ վարքագիծ կամ անվայել որևէ խոսք: Այս ուղղությամբ կրթաշրջանն ակնկալում է պաշտոնյաների, աշակերտների, ծնողների ու համայնքի համագործակցությունը:

Կրթաշրջանի անձնակազմը պետք է վերապատրաստվի ճանաչելու և անդրադառնալու այն վարքագծերին, որոնք խանգարիչ են և անհարիր՝ Ռուսումնական խորհրդի ֆաղափակություն: Դպրոցի ծառայողներին, աշակերտներին ու ծնողներին տեղեկացվելու է սույն կանոնակարգերի, ինչպես նաև ոչ ֆաղափակիր վարքագծի դեմ ֆայլեր ձեռնարկելու մասին: (Իրավական տեղեկանք.- Կրթական օրենսգրքի 32210, 44014, 44810, 44811 հոդվածներ և Կալիֆորնիայի ֆրեսկո օրենսգրքի 243.5, 415.5, 626.8, 627.7 հոդվածներ):

Ուսումնական անվտանգ վայրի մասին ակտ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը (GUSD) իր հանձնառությունն է համարում պահպանել ուսուցման այնպիսի միջավայր, որը գերծ է խորականությունից, անհանգստությունից, վայրագությունից, ահաբեկումից և կոլաբանությունից, հիմնվելով 422.55 հոդվածի ուսումնական 220 օրենքում նշված իրական կամ ընկալված բնութագրման, այդ թվում՝ հաշմանդամության, սեռի, սեռի ճանաչման, սեռի արտահայտման, ազգության, ցեղի կամ էթնիկայի, կրոնի, սեռական կողմնորոշության կամ վերոհիշյալ բնութագրմամբ անձի կամ խմբի հետ կապակցություն ունենալու պատճառով: Դպրոցի բոլոր պաշտոնյաները, ովքեր ականատես են խորականության, անհանգստության, վայրագության, ահաբեկման կամ կոլաբանության որևէ արարքի, պետք է անհապաղ ֆայլերի դիմեն միջամտելու, երբ պահով լինի: Որևէ աշակերտ, ով ներգրավվի խորականության, անհանգստության, վայրագության, ահաբեկման կամ կոլաբանության արարքի, ենթակա է կարգապահական պատժի ընդհուպ և ներառյալ դպրոցից հեռացման: Որևէ իրադեպ գեկուցելու և/կամ հակա-խորականության, հակա-անհանգստության, հակա-վայրագության, հակա-ահաբեկման կամ հակա-կոլաբանության կանոնների պատճենը ստանալու համար կապվեք Աշակերտական ծառայությունների գրասենյակի պատասխանատուի հետ (818) 241-3111 ներքին 285 հեռախոսահամարով:

ԴՊՐՈՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ (SARC)

1988 թվականի նոյեմբերից սկսյալ, Կալիֆորնիայի նահանգային օրենսգրքի 35256 հոդվածի համաձայն, նահանգային ֆոնդ ստացող հանրային դպրոցներից պահանջվում է պատրաստել և հրատարակել դպրոցի հաշվետվության գեկույցները (SARC): 2005 թվականի հունվարի 1-ից սկսյալ «Ոչ մի երեխա չպետք է անտեսվի (NCLB)» դաշնային օրենքի համաձայն պահանջվում է, որ ոչ-հանրային, ոչ-աղանդավոր դպրոցները հաշվետվության գեկույցներ պատրաստեն՝ կրթական օրենսգրքի 33126 հոդվածի համաձայն: Սույն գեկույցների նպատակն է՝ ծնողներին ու համայնքի անդամներին տրամադրել հանրային դպրոցների մասին կարևոր տեղեկություններ: Դպրոցի հաշվետվության գեկույցները (SARC) արդյունավետ միջոց են, որ դպրոցը տեղեկացնի իր նպատակների ուղղությամբ ցուցաբերած առաջադիմությունը:

SARC-ը պարունակում է դպրոցի անցյալի, ինչպես նաև աշակերտների ընդհանուր նկարագիրը: Այն ամփոփում է դպրոցի առաքելությունը, նպատակները և ձեռքբերումները: Նահանգային օրենքը պահանջում է, որ SARC-ը պարունակի հետևյալ տեղեկությունները՝ դեմոգրաֆիկ տվյալներ, դպրոցի անվտանգությունն ու ուսման միջավայր, ուսումնական տվյալներ, դպրոցն ավարտողների ֆանակ, դասարանների աշակերտների թիվ, ուսուցիչներ ու անձնակազմ, ուսումնական ծրագրերի բնութագրում, կոլեջի նախապատրաստություն, ֆինանսական և ծախսերի բացատրություն: Կալիֆորնիայի ներկայի օրենսդրությունը պահանջում է, որ դպրոցի հաշվետվության գեկույցի մեջ ցանկագրվեն ուսուցիչների բացակայությունները, ուսուցիչների թափուր պաշտոնները, բավարար դասագրքերի ու ուսումնական նյութերի առկայությունը և դպրոցը լավ վիճակում պահելու նորոգության անհրաժեշտությունը:

Բացի այդ, NCLB օրենքը պահանջում է, որ դպրոցի հաշվետվության գեկույցի մեջ ներառվեն՝ նահանգի կողմից պահանջվող և ուսումնական չափանիշների համաձայն աշակերտների «տարեկան բավարար առաջադիմությունը», Title I կոչվող ծրագրի բարելավումները, ավագ դպրոցների շրջանավարտների տոկոսը և 2004-05 տարեշրջանից սկսված SARC-ի հրատարակած տվյալները, թե ինչ աստիճան է գլխավոր առարկաները դասավանդող «բարձրակարգ ուսուցիչների» գիտելիքները:

Ինտերնետի հնարավորություն ունեցող ծնողները կարող են այցելել կրթաշրջանի www.gusd.net/sarc կայքէջը և կարողալ Դպրոցի հաշվետվության (SARC) վերջին տեղեկությունը: Դպրոցի հաշվետվության գեկույցի պատճենները ու թարգմանությունները կարելի է ստանալ Public Information գրասենյակից կամ՝ www.sarconline.org կայքէջից: Լրացուցիչ տեղեկությունների համար ծնողները կարող են գանգել դպրոց կամ կրթաշրջանի գրասենյակ և կարող են ժամադրություն ստանալ դպրոցն այցելելու և հանդիպելու դպրոցի ղեկավարության և անձնակազմի հետ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՍԱԳՐՈՒՄ

Ուսումնական տարվա ընթացքում, աշակերտները երբեմն լուսանկարվում կամ տեսագրվում են լրատվական միջոցների կողմից՝ ծնողներին ու համայնքին տեղյակ պահելու ուսումնական ծրագրերի, ելույթների ու ծրագրերի մասին: Կրթաշրջանը, նահանգային օրենքի համաձայն, համագործակցում է լրատվական միջոցների հետ, թույլ տալով, որ լրատվական միջոցների ներկայացուցիչները ներկայանան մեր դպրոցները և լրատվության նպատակով լուսանկարեն կամ տեսագրեն աշակերտներին: Աշակերտներին կարելի է դպրոցում լուսանկարել կամ տեսագրել նրանց ցուցաբերած առաջադիմության գնահատման ու պարգևատրման արարողության, ուսուցման ծրագրերի, ելույթների և ուսումնական խորհրդի ներկայացումների ժամանակ: Աշակերտները չեն կարող առանց անձնակազմի համաձայնության նրանց լուսանկարել:

Մենք հարգում ենք աշակերտների և նրանց ընտանիքների գաղտնիությունը: Միևնույն ժամանակ, մենք անհրաժեշտ ենք գտնում լրատվամիջոցների կողմից մեր ծրագրերին առնչվող տեղեկություններ և պատկերներ հրատարակելու (լուսանկարներ և տեսագրումներ) կարիքը:

Եթե Ձե՛ք ՑԱՆԿԱՆՈՒՄ, որ ձեր երեխայի լուսանկարը կամ նրա մասին տեսագրումը հայտնվի թերթերի, դպրոցի ու կրթաշրջանի կայքերի և զանազան հրատարակությունների մեջ (օրինակ՝ դպրոցի տեղեկատու), որոնք կատարվել են լրատվական միջոցների, դպրոցական խմբերի, կամ կրթաշրջանի համաձայնությամբ այլ խմբերի կողմից, խնդրում ենք լրացնել Form 6 հարցաթերթիկը և այն վերադարձնել դպրոցի տնօրենին:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՆՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (CAHSEE)

Կալիֆորնիայի ուսումնական կանոնների հոդված 48980 (c)-ի համաձայն ծնողները պետք է տեղեկանան, որ տասներկուերորդ դասարանն ավարտող յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է հաջողությամբ հանձնել Կալիֆորնիայի ավագ դպրոցների ելքի (Exit) ֆննությունը, որպեսզի կարողանա դիպլոմ ստանալ: CAHSEE-ի նպատակն է ավագ դպրոցում բարելավել աշակերտի ձեռքբերումները և վստահանալ, որ ավագ դպրոցն ավարտող աշակերտը կարող է տիրապետել գրել-կարդալու և մաթեմատիկայի հմտություններին:

Քննող աշակերտները, ներառյալ անկարողունակ աշակերտները, հաջողությամբ պետք է հանձնեն CAHSEE ֆննությունը որպեսզի կարողանան ավագ դպրոցի դիպլոմ ստանալ: CAHSEE ֆննությունը կարելի է հանձնել համապատասխան հարմարեցումներով ու փոփոխություններով, ինչպես պահանջվում է յուրաքանչյուր աշակերտի անհատականացված ուսումնական ծրագրի (IEP) կամ 504 ծրագրի համաձայն: Եթե աշակերտի IEP-ը կամ 504 ծրագիրը թույլատրում է օգտագործել այդ փոփոխությունները, որոնք հիմնականում վերափոխում են CAHSEE ֆննության բովանդակությունը, աշակերտը կարող է օգտվել այդ փոփոխություններից, սակայն ֆննությունը հաջող հանձնելու դեպքում պետք է ստանա Ուսումնական խորհրդից իրավաբանության (waiver) թույլտվություն (տես CAHSEE-ի իրավաբանության խորհրդի 6162.52 կանոններ): Հատուկ կրթությանը մասնակցող բոլոր աշակերտներից պահանջվում է հանձնել CAHSEE-ի ֆննությունը, բացի այն պարագայից, երբ դա չի պահանջվում՝ աշակերտի անհատականացված ուսումնական ծրագրի համաձայն:

CAHSEE ֆննության թվականները 2015-2016 ուստարվա համար

Դասարան	Անգլերեն/Լեզվարվեստ	Մաթեմատիկա
12-րդ	Երեքշաբթի, Հոկտեմբեր 6, 2015	Չորեքշաբթի, Հոկտեմբեր 7, 2015
11-րդ և 12-րդ	Երեքշաբթի, Նոյեմբեր 3, 2015	Չորեքշաբթի, Նոյեմբեր 4, 2015
12-րդ	Երեքշաբթի, Փետրվար 2, 2016	Չորեքշաբթի, Փետրվար 3, 2016
10-րդ, 11-րդ և 12-րդ	Երեքշաբթի, Մարտ 15, 2016	Չորեքշաբթի, Մարտ 16, 2016
